TELCELL

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024 թ.-ի տարեկան հաշվետվությունը

30.04.2025

Բովանդակություն

- Խորհրդի նախագահի ուղերձ
- Գլխավոր տնօրենի ուղերձ
- Մեր մասին
- Ֆինանսական կայունություն և ակտիվների/պասիվների կառուցվածք
- Ընկերության ռազմավարությունը և ծառայությունները
- Կապիտալ
- Եկամուտներ և ծախսեր
- Արդյունավետության հիմնական ֆինանսական ցուցանիշներ (ROA և ROE)
- Ներքին հսկողության համակարգ
- Կաղրային քաղաքականություն
- Մասնաճյուղերի ցանց
- Կառավարման մարմինների տարեկան զեկույցը
- Այլ հողումներ

Խորհրդի նախագահի ուղերձը

Արտաշես Ավետիսյան

Խորհրդի նախագահի ուղերձը

Հարգելի՛ բաժնետերեր,

Telcell ընկերության խորհրդի անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլորիդ մեր նկատմամբ ցուցաբերած վստահության և նախապատվության համար: Այսօր գոհունակությամբ կարող ենք արձանագրել, որ նախորդ տարին Telcell-ի համար ձեռքբերումների և աճի հերթական փուլն էր, ինչը հնարավոր դարձավ կարևոր նախաձեռնությունների ու ծրագրերի հետևողական իրականացման, կորպորատիվ կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի արդյունավետ կառավարման արդյունքում:

Իր ողջ գործունեության ընթացքում Telcell-ը հավատարիմ է մնացել թափանցիկության, նորարարության ու կայուն աճի նկատմամբ իր հանձնառությանը, և մեր նպատակաուղղված որոշումներն ու քայլերը նշանակալի արդյունքներ են տվել:
Մենք մեծ պատասխանատվությամբ ենք մոտենում մեզ վստահված միջոցների կառավարմանը. հաճախորդների ակնկալիքները գերազանցելու հաստատակամ հանձնառությունը մշտապես ուղղորդում է մեզ առաջ՝ իրագործելու մեր բոլոր նպատակներն ու Հայաստանի համար ստեղծելու մնայուն արժեքներ: Մեր նախաձեռնությունները մշակվել են ոչ միայն փոփոխություններին հարմարվելու, այլև մեր գործունեության ոլորտում առաջատար լինելու միտումով, ինչի շնորհիվ Telcell-ը այսօր էլ շարունակում է մնալ նորարարության և հաճախորդների գոհունակության առաջամարտիկ:

Մենք շարունակել ենք ուժեղացնել կառավարման համակարգը՝ Telcell-ի գործունեությունը համապատասխանեցնելով միջազգային լավագույն փորձին և մեծացնելով ընկերության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Մենք նաև զգալի առաջընթաց ենք գրանցել հաճախորդների ու գործընկերների հետ հարաբերությունների խորացման ուղղությամբ՝ ընդլայնելով ընկերության ծառայությունները և կենտրոնանալով երկարաժամկետ հավատարմության խթանման վրա՝ ոչ թե զուտ գործարքային, այլ համապարփակ հարաբերություններ կառուցելու միջոցով: Նույն պատասխանատվությամբ և նվիրվածությամբ էլ մենք ձևավորում ենք հարաբերությունները բաժնետերերի հետ՝ գնահատելով ձեր վստահությունն ու ակնկալիքները:

Անցած տարվա կտրվածքով մեզ համար նշանակալի էին երեք կարևոր իրադարձություն.

- **Telcell-ը դարձավ բաց բաժնետիրական ընկերություն,**
- **Telcell-ը իրագործեց մայրաքաղաքի խոշորագույն տրանսպորտային ծրագիրը,**
- **Telcell-ը, որպես սոցիալապես պատասխանատու ընկերություն, համագործակցության պայմանագիր կնքեց Koreez կրթական ծրագրի հետ:**

Մարտահրավերներն ու հնարավորությունները կառավարելուն զուգահեռ մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել կառավարման համակարգի ամրապնդմանը: Telcell-ի ղեկավարության ակտիվ մասնակցությամբ տեղի ունեցած քննարկումների ընթացքում կառավարման ջանքերն ուղղել ենք նաև ապագա ծրագրերի իրականացմանը: Մեր հիմնական նպատակն է բարելավել կառավարումը յուրաքանչյուր մակարդակում, որպեսզի այն համապատասխանի մեր աճող մասշտաբին և շուկայի դինամիկ պահանջներին: Մեզ համար շատ կարևոր է ռազմավարության մշակման ու իրականացման գործընթացի բարելավումը, և մենք մտադիր ենք այս ոլորտում ընդլայնել մեր կարողություններն առանցքային նախաձեռնությունների միջոցով:

Մեր ռազմավարական ջանքերն ուղղված են կայունության, ճկունության և կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև գործող շուկայում Telcell-ին որպես առաջատար դիրքավորելուն: Մենք ձգտում ենք շարունակաբար առաջնորդել ընկերությանը դեպի նորարարություն ու կայունություն Հայաստանի տնտեսական դաշտում:

Հավատարիմ ենք մնում նաև սոցիալական պատասխանատվության մեր հանձնառությանը: Տարաբնույթ նախաձեռնություններին աջակցության, ինչպես նաև կարևոր ծրագրերում ներգրավվելու միջոցով մենք ակտիվորեն նպաստում ենք ՀՀ քաղաքացիների բարեկեցությանը: Այս ջանքերը համահունչ են ընկերության հիմնական արժեքներին և ամրապնդում են մեր դիրքավորումը որպես պատասխանատու ընկերություն:

Խորհրդի անունից ևս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում վստահության համար և հետագայում նույնպես ակնկալում սերտ համագործակցություն ընկերության բաժնետերերի, գործընկերների ու հաճախորդների հետ:

Խորհրդի նախագահ
Արտաշես Ավետիսյան

Գլխավոր տնօրենի ուղերձ

Արտյոմ Ղազարյան

Գլխավոր տնօրենի ուղերձ

Հարգելի՛ բաժնետերեր,

2024 թ. մեր ընկերության համար շրջադարձային էր: Telcell-ի գործունեության սկզբից ի վեր մեր տեսլականն է եղել դառնալ ազգային ֆինանսական և տեխնոլոգիական էկոհամակարգ, որը ոչ միայն կփոխի ոլորտը կանխիկից դեպի թվայինի, այլև կձևավորի նոր վարքագիծ և կձևափոխի մեր հաճախորդներին, աշխատակիցներին և գործընկերներին ծանոթ փորձառությունը ֆինանսական տեխնոլոգիաների ոլորտում, և 2024 թ. դա մեզ հերթական անգամ հաջողվեց: Այս կոնտեքստում հաշվետու 2024 թ. նախատեսված հիմնական ռազմավարական և անկյունաքարային նախագծերն էին.

- **Վերափոխվել և դառնալ բաց բաժնետիրական ընկերություն՝ իրականացնելով բաժնետոմսերի հրապարակային թողարկում**
- **Մեկնարկել և ավարտին հասցնել Երևանի միասնական տրանսպորտային համակարգի ներդրման եզրափակիչ փուլը**

Տարվա մեկնարկին ընկերությունը վերափոխեց իր կազմակերպաիրավական ձևը՝ դառնալով բաց բաժնետիրական ընկերություն: Այդ գործընթացի տրամաբանական ավարտը բաժնետոմսերի հրապարակային թողարկումն էր: Սեպտեմբերին ազդարարվեց բաժնետոմսերի հրապարակային վաճառքի մեկնարկի մասին, և սահմանված **ժամկետից 1 օր շուտ** հայտարարված բոլոր բաժնետոմսերը սպառվեցին: Դեկտեմբերին ընկերության բաժնետոմսերը ցուցակվեցին B դասում և ներկայումս գրանցում են կայուն գնաճ: Ավելի քան **4 մլն բաժնետոմս** սպառվեց 2 ամսվա ընթացքում, և այսօր մենք ունենք շուրջ **3600 բաժնետեր**՝ ինստիտուցիոնալ խոշոր կազմակերպություններից մինչև օգտատեր:
Երևանի միասնական տոմսային համակարգի ներդրման շրջանակներում մենք իրականացրինք խոշոր ներդրում՝ շուրջ **1.5 մլրդ ՀՀ դրամ** ծավալով: Վերափոխեցինք և վերազինեցինք գրեթե ամբողջ համակարգը:

Բոլոր ավտոբուսներում և տրոլեյբուսներում տեղադրվեցին ժամանակակից սարքավորումներ, որոնք նախատեսված են թվային ուղետոմսերի սքանավորման համար, մետրոպոլիտենի բոլոր կայարաններում փոխվեցին անցագրելները, նոր տեխնիկական լուծումներով և սարքավորումներով համալրվեցին մետրոպոլիտենի դրամարկղերը, մեր մասնագետները

վերապատրաստման դասընթացներ իրականացրին մետրոպոլիտենի աշխատակիցների համար, կանգառամերձ տարածքները հագեցվեցին **Telcell Terminal**-ներով: Ծրագրավորվեց և ներդրվեց ամբողջական մի համակարգ մեր միջազգային փորձառու գործընկերոջ հետ: Այս ամենը՝ բացառապես ընկերության միջոցներով՝ ի նպաստ մեր մայրաքաղաքի տրանսպորտային համակարգի զարգացման:

Նշված նախագծերի իրականացումը ընդամենը 1 տարվա ընթացքում անիրական էր թվում: Հիմա հպարտությամբ կարող ենք փաստել, որ մեր թիմի գերլարված, պատասխանատու ու սրտացավ աշխատանքի շնորհիվ հաջողվեց դա անել: Ճանապարհը հարթ չէր, ընթացքում առաջացան խնդիրներ և խոչընդոտներ, որոնց կանխատեսումն անհնար էր: Հասարակական տրանսպորտի նման մաշտաբի ռեֆորմը ենթադրում էր նաև մեծ ճնշում, ոչ միանշանակ ընկալում, զանգվածային լրատվամիջոցների ու հասարակության կողմից խիստ քննադատություն: Սակայն այն գիտակցումը, որ այս ամենը արվում է մեր մայրաքաղաքի զարգացման ու բարելավման նպատակով, որ այս ամենը հիմնովին վերափոխելու է բազում կարծրացած մոտեցումներ և, ի վերջո, մեր ընկերության գործունեությունը դառնալու է Երևանի զարգացման պատմության մի մասը, մեզ տալիս էր մեծ համառություն ու համբերատարություն՝ աշխատանքը պատվով ավարտին հասցնելու համար:

Հաշվետու տարում ընկերությունն արձանագրեցինք կայուն աճ իր գործունեության գրեթե բոլոր ոլորտներում, ինչը փաստում է, որ մենք շարժվում ենք ճիշտ ուղեգծով: Կառավարման ճկուն ռազմավարության և արդյունավետ գործունեության շնորհիվ մեզ հաջողվել է հասնել մի շարք կարևոր արդյունքների.

- Տերմինալային ցանցը աճել է՝ հատելով 5000 տերմինալի շեմը ամբողջ երկրի տարածքով, և շարունակում է պահել առաջատարի դիրքերը շուկայում
- Մեր համակարգի միջոցով վճարումների ծավալը աճել է **11%-ով** և հատել **900 մլրդ ՀՀ դրամի** շեմը
- Telcell Wallet հավելվածի ակտիվ օգտատերերի քանակը աճել է **80.5%-ով**
- Մեր համակարգի միջոցով դրամական փոխանցումների ծավալը աճել է շուրջ **52%-ով**
- Հավելվածի միջոցով ստացված վարկերի ծավալը աճել է **25%-ով**
- Հաշվետու տարվա ընթացքում թվային Visa տեսակի քարտերի քանակը աճել է **40,000-ով**

Մանրամասն արդյունքները նկարագրված են օրակարգում ներառված 2024 թ. տարեկան հաշվետվության մեջ:

Նման լայնածավալ նախագծերը պահանջում էին նաև համարժեք ծախսեր, որոնք նույնպես աճել են: Արդյունքում ընկերության զուտ շահույթը մի փոքր նվազել է, սակայն ստեղծվել են բոլոր հիմքերը՝ կանխատեսելու նաև զուտ շահույթի աճ արդեն 2025 թ.:
Հավատարիմ մնալով նաև մեր դիվիդենտային քաղաքականությանը՝ մենք բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանն ենք ներկայացրել շուրջ **1,25 մլրդ ՀՀ դրամի** զուտ շահույթի որպես դիվիդենդ բաշխումը: Այն կազմում է արձանագրված զուտ շահույթի շուրջ **71%**-ը: Այսպիսով՝ 1 բաժնետոմսի շահութաբերությունը կկազմի 9%, որը 7 ամիս ժամանակահատվածի համար **աննախադեպ եկամտաբերություն** է ապահովում: Մենք շարունակում ենք մեր գործողությունները առավել արդյունավետ կառավարման և տեխնոլոգիական թիմի համալրման ու զարգացման ուղղություններով: Արդեն իրականացրել ենք կազմակերպական նոր կառուցվածքի ներդրման գործընթացը, ներդրել ենք թարմացված բիզնես գործընթացներ, կատարելագործել և վերազինել ենք տեղեկատվական անվտանգության ոլորտը, թիմը համալրել ենք նոր մասնագետներով: Մենք վստահ ենք, որ այժմ ունենք նոր, ժամանակակից պահանջներին ու մարտահրավերներին համահունչ փորձառու թիմ, որի հետ կարող ենք նվաճել նոր բարձունքներ ու ստեղծել բացառիկ ֆինտեխ էկոհամակարգ:

Շնորհակալություն հայտնելով բաժնետերերին, գործընկերներին և հատկապես հաճախորդներին՝ վստահեցնում եմ, որ մեր թիմն ունի այն ներուժը, որն անհրաժեշտ է արհեստական բանականության ու տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում՝ դառնալու շուկայի առաջամարտիկը և այն օրինակը, որին ձգտելու են շատերը ոչ միայն Հայաստանում, այլև Հայաստանի սահմաններից դուրս:
Telcell-ը մարդիկ են, և ցանկացած լուծում, գործընթաց, նախագիծ իրականացվում է մարդկանց կողմից՝ մարդկանց համար:
Մեր ապագան վառ է լինելու, վառ նարնջագույն՝ ինչպես մեր բրենդն է:

Գլխավոր տնօրեն
Արտյոմ Ղազարյան

Մեր մասին

Telcell-ը՝ տերմինալից մինչև էկոհամակարգ

Telcell-ը, դիրքավորվելով որպես Հայաստանի ֆինանսական ազգային օպերատոր, 2007 թ. ի վեր վստահորեն կառավարում է ֆինանսների շարժը երկրում՝ քաղաքացիներին առաջարկելով ֆինանսական ծառայություններ և պրոդուկտներ՝ հիմնարարներից մինչև նորարարականները:

Մեր ջանքերն ուղղված են ֆինանսական ոլորտը կանխիկից թվայինի փոխակերպելուն, որովհետև մենք համոզված ենք, որ ժամանակակից տեխնոլոգիական լուծումները նոր հնարավորություններ են ստեղծում թե՛ անհատների, թե՛ ընկերությունների համար:

Ֆինանսական տեխնոլոգիաները պետք է բարելավեն առօրյան

Telcell-ում մենք հավատում ենք, որ տեխնոլոգիաները պետք է կյանքը դարձնեն ավելի հեշտ, անվտանգ և բարեկեցիկ: Բոլոր այս տարիների ընթացքում մենք շարունակել ենք ընդլայնել մեր ծառայությունների շրջանակը՝ հարմարությունն ու նորարարությունը հասցնելով յուրաքանչյուրին:
Մենք պարզապես ֆինանսական էկոհամակարգ չենք, մենք շարժում ենք՝ ուղղված խելացի ապրելակերպի ձևավորմանը: Թվային վճարումներից մինչև անվտանգ նույնականացման լուծումներ՝ Telcell-ն աջակցում է անհատներին և բիզնեսներին հաջողելու ժամանակակից աշխարհում:

2024 թ. Telcell-ը շարունակեց իր կայուն աճը՝ ամրապնդելով դիրքերը վճարահաշվարկային ծառայությունների շուկայում: Տարին նշանավորվեց կարևոր ձեռքբերումով՝ ընկերության բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխմամբ (IPO) Հայաստանի արժեթղթերի բորսայում (AMX), որը մեկնարկել էր սեպտեմբերի 18-ին և, մեծ պահանջարկի շնորհիվ, ավարտվել էր նախատեսվածից շուտ՝ նոյեմբերի 29-ին:

Պատմական ակնարկ

Telcell-ի պատմությունը սկսվել է 2007 թ., երբ ընկերությունը ստացավ ՀՀ Կենտրոնական բանկի լիցենզիա վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու համար:

2007

ՀՀ կենտրոնական բանկը տրամադրեց դրամական փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ իրականացնելու **լիցենզիա**:

Telcell-ը Հայաստանում գործարկեց **ինքնասպասարկման տերմինալների** միջոցով վճարումների ընդունման առաջին ցանցը՝ ապահովելով հարմար և արագ վճարումների հնարավորություն ողջ երկրի տարածքում:

2012

Գործարկվեց **«7/365»** մասնաճյուղը: Այսօր Telcell-ն ունի **12 մասնաճյուղ**, որոնք ապահովում են հաճախորդների հարմարավետ սպասարկում՝ առանց աշխատանքային օրերի սահմանափակման՝ ստեղծելով մշտապես հասանելի կենտրոններ ծառայությունների տրամադրման և աջակցության համար:

2016

Ընկերությունը ստացավ **էլեկտրոնային փող թողարկելու լիցենզիա**, ինչը կարևոր քայլ էր Telcell-ի թվային ֆինանսական ծառայությունների զարգացման ուղղությամբ: Այս լիցենզիան ընկերությանը հնարավորություն է տալիս իրականացնել էլեկտրոնային դրամական գործառնություններ՝ բարձրացնելով ծառայությունների հուսալիությունն ու անվտանգությունը:

2017

Գործարկվեց **MyTelcell** հավելվածը (այժմ՝ **Telcell Wallet**): Այժմ հավելվածն առաջարկում է **600-ից ավելի ծառայություն**՝ բանկային հաշիվ և քարտ բացելու հնարավորություն, վարկի համար դիմելու գործառույթ, տրանսպորտային ուղետոմսերի ձեռքբերում և շատ ավելին:

2018

Telcell ինկասացիայի ստեղծում:

Ներդրվեց **Telcell Business** հավելվածը՝ որպես հարթակ մեր գործընկեր կազմակերպությունների համար: Այն հնարավորություն է տալիս հետևել հաշիվներին կատարված վճարումներին և կատարել ելքագրումներ ցանկացած պահի՝ արագ և հարմար եղանակով:

2019

BON Market-ի ստեղծում:

2021

Telcell Wallet հավելվածում գործարկվեց **վարկի համար դիմելու հնարավորությունը**: Հավելվածում հնարավոր դարձավ դիմել և ստանալ վարկ՝ առցանց և րոպեների ընթացքում:

2022

Բանկային հաշվի (**AEB, Evoca**) բացում Telcell Wallet-ից:

2022

Telcell-ը հաղթեց **Երևանի հասարակական տրանսպորտում** միասնական տոմսային համակարգի ներդրման մրցույթում: Այսօր ընկերությունը սպասարկում է մայրաքաղաքի հանրային տրանսպորտի ցանցը՝ տրամադրելով ժամանակակից վճարային գործիքներ և արդիականացնելով մետրոյի կայարանները:

Ընկերությունը իրականացրեց **վերաբրենդավորում՝** ներկայացնելով ավելի թարմ և վառ դիզայն: Դրան հաջորդեց քոբրենդային **Visa թվային քարտերի** թողարկումը՝ Հայէկոնոմբանկի հետ համագործակցությամբ:

PartPay by Telcell

«Գնիր հիմա, վճարիր հետո» ծառայության մեկնարկ:

TELCELL MARKET

Առաջին հայկական **մարքեթփլեյսի ստեղծում**:

2023

100% by Telcell

Telcell-ը գործարկեց **Fast charge** արտաքին մարտկոցների ցանց Հայաստանում:

2024

IPO

Ընկերությունը վերակազմավորման արդյունքում դարձավ **բաց բաժնետիրական**: IPO-ից հետո ընկերության բաժնետոմսերը ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայում և այժմ հասանելի են ազատ շուկայում:

Telcell Էկոհամակարգը

Մեր էկոհամակարգը չի սահմանափակվում ծառայություններով՝ այն ընդլայնում է հնարավորությունները



Telcell էկոհամակարգը ձևավորվել է որպես բազմաբնույթ և զարգացող ֆինանսական և ոչ ֆինանսական լուծումների համակարգ, որն ընդգրկում է տարբեր ծառայություններ՝ օգտատերերին տրամադրելով եզակի հարմարավետություն, անվտանգություն և արագություն: Իր օգտատերերին առաջարկելով թվային վճարման, նույնականացման և բանկային գործառույթներ, Telcell-ը ապահովում է ֆինանսական աշխարհը հասանելի և հասկանալի դարձնելով թե՛ անհատների, թե՛ բիզնեսների համար:

Telcell-ի ռազմավարությունը հիմնված է ազգային արժեքների, տեխնոլոգիական առաջընթացի, վստահության և հասարակական արժեք ստեղծելու վրա: Մենք գործում ենք մի նպատակով՝ ստեղծել լուծումներ, որոնք կբարելավեն Հայաստանում ապրող յուրաքանչյուր քաղաքացու կյանքը և կբացեն նոր հեռանկարներ՝ ավելի շատ հնարավորություններով:

Ֆինանսական կայունություն և ակտիվների/պասիվների կառուցվածք

Ակտիվների աճն ու ներդրումների ուղղվածությունը

Վերջին երկու տարիների ընթացքում Ընկերությունը շարունակաբար կատարել է ներդրումներ զարգացման ուղղությամբ՝ նպաստելով ակտիվների տարբեր բաղադրիչների զգալի աճին:
Մասնավորապես՝

- Ոչ ընթացիկ ակտիվները աճել են 2 տարվա ընթացքում 396 մլն դրամով, իսկ միայն 2024 թ. ընթացքում՝ 223 մլն դրամով,
- Պաշարները ընթացիկ ակտիվներում նույնպես աճել են՝ 71 մլն դրամով:

Ցուցանիշների այս աճը հիմնականում պայմանավորված է IPO-ի շրջանակներում ներգրավված միջոցներով, որոնք նպատակաուղղվել են ինչպես գործող նախագծերի ընդլայնմանը, այնպես էլ նոր նախաձեռնությունների արդյունավետ իրագործմանը:
Ստորև ներկայացված է 2022-2024 թթ. ընթացքում ակտիվների հիմնական ուղղությունների համեմատական վերլուծությունը՝ ընդգծելու աճի հիմնական շարժիչները:



Ակտիվների կառուցվածքի էական փոփոխությունները

Բացի հիմնական ներդրումներից, վերջին երկու տարվա ընթացքում զգալի առաջընթաց է արձանագրվել նաև Կազմակերպության դրամական միջոցների և ընթացիկ ակտիվների կառավարման ոլորտում: Մասնավորապես՝

- դրամական միջոցների ծավալը աճել է 2023 թ. ընթացքում շուրջ 2.4 մլրդ դրամով և 2024 թվականին պահվել նույն մակարդակում:

Ակտիվների աճի համատեքստում նշանակալի տեղ է զբաղեցնում նաև դեբիտորական պարտքերի ավելացումը. միայն 2024 թվականի ընթացքում այդ ցուցանիշն **աճել է մոտ 31,761 մլն դրամով (կամ 28%-ով 2023 թ. համեմատ)**, ինչը պայմանավորված է ինչպես Կազմակերպության ընդլայնված բիզնես ակտիվությամբ, այնպես էլ ներդրումային նախաձեռնությունների ժամանակացույցով:
Ստորև ներկայացված է 2022-2024 թթ. ակտիվների կառուցվածքի համեմատական պատկերը, որը վերհանում է հիմնական ուղղությունները և դրանց ազդեցությունը ընդհանուր ակտիվների աճի վրա:

Ակտիվներ	2022	2023	2024	Աճ
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	900,124	1,036,917	1,221,001	18%
Ոչ նյութական ակտիվներ	501,912	476,470	578,911	21%
Գուդվիլ	1,157,700	1,157,700	1,157,700	0%
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	294,348	264,285	201,408	-24%
Կանխավճարներ	50,182	139,518	81,881	-41%
Տրամադրված փոխառություններ	205,000	205,785	241,244	17%
Հետաձգված հարկային ակտիվներ	62,177	63,880	85,857	34%
Ընդամենը	**3,171,443**	**3,344,555**	**3,568,002**	**7%**

Ակտիվների կառուցվածքի էական փոփոխությունները

Ակտիվներ	2022	2023	2024	Աճ
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	148,000	272,969	343,946	26%
Տրամաղրված փոխառություններ	43,383	38,159	45,329	19%
Ավանդներ բանկերում	155,359	155,359	155,326	0%
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	981,614	1,129,471	1,446,408	28%
Ընթացիկ հարկային ակտիվներ	1,555	1,555	-	-100%
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,508,989	7,902,100	7,915,646	0%
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	5,716,791	5,959,251	4,337,560	-27%
Ընդամենը	**12,555,691**	**15,458,864**	**14,244,215**	**-8%**
Ընդամենը ակտիվներ	**15,727,134**	**18,803,419**	**17,812,217**	**-5%**

Պասիվների կառուցվածքի փոփոխությունները և հավասարակշռման քաղաքականություն

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը հասել է ֆինանսական պարտավորությունների կառավարման զգալի բարելավման՝ ապահովելով պասիվների **ընդհանուր 17% նվազում**, այն դեպքում, երբ ակտիվները նվազել են **ընդամենը 5%-ով**, ինչը հիմնականում պայմանավորված է էմիսիոն եկամուտի աճով:

- Ոչ ընթացիկ պարտավորությունները նվազել են ավելի քան 785 մլն դրամով,
- իսկ ընթացիկ պարտավորությունները՝ ավելի քան 1,826 մլն դրամով:

2023 թ. արձանագրվել էր ակտիվների և պասիվների **շուրջ 20% աճ**, ինչը պայմանավորված էր Կազմակերպության շրջանառության էական ընդլայնմամբ: 2024 թ., պահպանելով շրջանառության աճի միտումը, իրականացվել է փոխհաշվարկի գործընթացի արդյունավետացում գործընկերների հետ, ինչի արդյունքում զսպվել է դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների համամասն աճը և պահպանվել է ֆինանսական կայունության բարձր մակարդակը: Ստորև ներկայացված է 2022-2024 թթ. պասիվների հիմնական ուղղությունների համեմատական վերլուծությունը:



Վարկային պարտավորությունների մարում և կրեդիտորական պարտավորությունների նվազում

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը շարունակել է իր պարտավորությունների կառավարման ռազմավարությունը՝ ապահովելով վարկերի և փոխառությունների մարում **ավելի քան 809 մլն** դրամի չափով:
Այս գործընթացի արդյունքում զգալիորեն նվազել են նաև առևտրային և այլ կրեդիտորական պարտավորությունները: Մասնավորապես՝ 2023 թ. համեմատ դրանց չափը կրճատվել է **շուրջ 1,713 մլն** դրամով՝ հասնելով **10,752 մլն** դրամի, ինչը վկայում է ֆինանսական պարտավորությունների նկատմամբ ցուցաբերվող հետևողական և պատասխանատու մոտեցման մասին:
Ստորև ներկայացված է 2022-2024 թթ. ակտիվների կառուցվածքի համեմատական պատկերը, որը զուգակցվում է պասիվների հիմնական ուղղությունների դինամիկայով՝ ապահովելով ամբողջական պատկեր Կազմակերպության ֆինանսական կայունության վերաբերյալ:

Սեփական կապիտալ	2022	2023	2024	Աճ
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	1,326,704	2,099,720	1,290,677	-39%
Վարձակալության գծով պարտավորություն	262,757	205,866	148,650	-28%
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	186,152	82,068	162,550	98%
Ընդամենը	**1,775,613**	**2,387,654**	**1,601,877**	**-33%**
Ընթացիկ պարտավորություններ				
Վարձակալության գծով պարտավորություն	65,374	73,281	84,196	15%
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8,839,844	12,384,382	10,590,202	-14%
Ընթացիկ հարկային պարտավորություններ	684,016	289,653	245,954	-15%
Ընդամենը	**9,589,234**	**12,747,316**	**10,920,352**	**-14%**
Ընդամենը պասիվներ	**11,364,847**	**15,134,970**	**12,522,229**	**-17%**
Ընդամենը սեփական կապիտալ եւ Պասիվներ	**15,727,134**	**18,803,419**	**17,812,217**	**-5%**

Ընկերության ռազմավարությունը և ծառայությունները

Ընկերության ռազմավարությունը

Ընկերության առաքելությունն է դիրքավորել Telcell էկոհամակարգը և ստեղծել պրոդուկտներ ու ծառայություններ՝ **հիմնված ազգային արժեքների վրա**, ստեղծել այն, ինչի կարիքն ունի Հայաստանում յուրաքանչյուր մարդը:
Մեր տեսլականն է դառնալ **ագրեգատ** և ձևավորել **open-banking համակարգ**, որը թույլ կտա մեր օգտատերերին տեսնել պրոդուկտների ամբողջ սպեկտրը (բոլոր բանկերի ծառայություններն ու պրոդուկտները, միջոցառումները և գործընկերների ծառայությունները) միասնական համակարգում՝ ընկերության պրոդուկտներում:
Ընկերության կայուն զարգացման, շահառուների կարիքներն ու սպասելիքները առավելագույնս բավարարելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ներքին բացասական գործոններն ու ռիսկերը նվազեցնելու նպատակով Ընկերությունն իր առջև դրել է հետևյալ հիմնական ռազմավարական խնդիրները.

- **թվայնացնել** և ավտոմատացնել վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը,
- ընդունել վճարումներ **նոր տեխնոլոգիաների միջոցով**,
- **ընդլայնել վճարումների** ընդունման տերմինալների **ցանցը**,
- **զարգացնել** Telcell Wallet և Telcell Business **հավելվածները**,
- ընդլայնել մասնաճյուղերի ցանցը,
- **զարգացնել** էլեկտրոնային և թվային **կոմերցիան**,
- ավելացնել ծառայություն մատուցող գործընկեր կազմակերպությունների քանակը, այդ թվում՝ ներգրավելով **միջազգային գործընկերների**,
- մատուցել ծառայությունների ավելի լայն շրջանակ,
- զարգացնել և կատարելագործել կառավարման համակարգը,
- նախաձեռնել օրենսդրական **բարեփոխումներ**,
- հետևողականորեն կիրառել կորպորատիվ **սոցիալական պատասխանատվության** քաղաքականությունը,
- շարունակաբար իրականացնել **բարեգործական** ծրագրեր:

Կորպորատիվ կառավարման սկզբունքները

Ընկերությունը հետևում է իր կազմակերպաիրավական կառուցվածքին համապատասխանող կորպորատիվ կառավարման սկզբունքներին, մասնավորապես՝ ապահովում է արդյունավետ կորպորատիվ կառավարման միջավայր, իր մասնակիցների իրավունքների իրականացումը և հավասար վերաբերմունք վերջիններիս նկատմամբ, ինչպես նաև համագործակցում է վերջիններիս հետ՝ խթանելով հասարակության բարեկեցության մակարդակի աճը:

Ընկերության կառավարման համակարգը մշակված է ՀՀ օրենսդրության շրջանակներում և համապատասխանում է ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին (կանոնագրքին):

Ընկերությունն առաջնորդվում է հետևյալ կորպորատիվ արժեքներով.

Ընկերության բիզնես նկարագիրը

«Թել-Սել» ԲԲԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային և հարակից ծառայություններ մատուցող առաջատար ընկերություններից մեկը: Ընկերությունը ներկայումս մատուցում է ծառայությունների հետևյալ տեսակները՝

1. Վճարումների ընդունման ծառայություն՝ տերմինալների միջոցով վճարումների ընդունում՝ պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց օգտին վճարումների ընդունում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարում:

2. Ընկերության մասնաճյուղերի միջոցով վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, այդ թվում նաև՝ դրամական (փողային) փոխանցումների իրականացում, վճարումների ընդունում, կանխիկ դրամական միջոցների տրամադրում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարում:
3. Telcell Wallet հավելվածի միջոցով էլեկտրոնային փողերի թողարկում և սպասարկում, պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց օգտին վճարումների ընդունում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարում, այդ թվում նաև՝

   - QR տեխնոլոգիայի վրա հիմնված էլեկտրոնային փողով տնտեսվարողների օգտին վճարումների ընդունում,
   - բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հաճախորդներին վարկային միջոցների տրամադրում հաճախորդի էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվին:

Telcell Wallet-ը հնարավորություն է տալիս օգտվել 600+ ծառայություններից մեկ հարթակում: Telcell Wallet-ի օգտատերերը, շնորհիվ ծառայությունների բազմազանության, կարող են իրականացնել իրենց ամենօրյա բոլոր գործարքները մեկ հավելվածի միջոցով՝ միաժամանակ օգտվելով պարբերական թարմացումներից և նորարարական գործառույթներից:

4. ՀՀ առևտրային բանկերին WEB/API հասանելիություն տրամադրելով՝ Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների օգտին վճարումներ ընդունելու հնարավորություն:
5. Պրոցեսինգ:
6. Քլիրինգ:

Telcell Wallet հավելված

2017 թ. ՀՀ կենտրոնական բանկից էլեկտրոնային փողի թողարկման թույլտվություն ստանալով և արձագանքելով թվային տեխնոլոգիաների ու բջջային վճարումների համաշխարհային միտումներին՝ ընկերությունը ներկայացրեց **Telcell Wallet** հավելվածը: Այս նորարարական ֆինանսական գործիքը, որը հասանելի է և՛ iOS, և՛ Android օպերացիոն համակարգերում, հնարավորություն է տալիս օգտատերերին հեշտությամբ իրականացնել բազմաբնույթ ֆինանսական գործարքներ ցանկացած վայրից և ժամանակ:







Իր գործարկման առաջին փուլում Telcell Wallet-ը ներկայացնում էր «Տերմինալը գրպանում» հայեցակարգը՝ հնարավորություն ընձեռելով օգտատերերին իրենց սմարթֆոնների միջոցով կատարել այն բոլոր գործարքները, որոնք նախկինում հասանելի էին միայն տերմինալների միջոցով: Այդ գործարքների թվում էին վճարումներ հօգուտ բազմաթիվ ծառայություն մատուցողների՝ իրավաբանական անձանց, բջջային օպերատորների, կոմունալ ծառայությունների, վարկային կազմակերպությունների, ինտերնետ մատակարարների և այլ ընկերությունների:
Հետագայում Telcell Wallet-ի զարգացման և առաջխաղացման համար ձևավորվեց թիմ, որի աշխատանքի արդյունքում մեկնարկվեց **BON Market** լոյալության համակարգը:
Հաջորդիվ հավելվածում զարգացան այնպիսի ֆինանսական ծառայություններ, ինչպիսիք են՝ քարտից քարտ փոխանցումներ, փոխանցումներ ֆիզիկական և իրավաբանական անձանց հաշիվներին, դրամական փոխանցումներ հավելվածի ներսում, ունիվերսալ վարկային կազմակերպությունների կողմից օնլայն վարկավորում և այլն:

Ծառայությունների ցանկի ընդլայնման ռազմավարության շրջանակներում կատարելագործվեց ֆինանսական վերահսկողության գործիքակազմը և անհատական բյուջետավորման համակարգը: Հավելվածը հարստացվեց նոր գործառույթներով՝ օգտատերերին հնարավորություն տալով մեքենայի տվյալները կցագրել համակարգում, վճարել «Ա» և «Բ» գոտիների կայանատեղիների համար, առցանց ստուգել և մարել տրանսպորտային տուգանքները, կնքել ԱՊՊԱ պայմանագրեր, ինչպես նաև իրականացնել պետական հարկերի և տուրքերի վճարումներ:
Ընդլայնվեց գործընկերական ենթակառուցվածքը, ինչը թույլ է տալիս հազարավոր կետերում՝ ռեստորաններում, սրճարաններում, խանութներում **Telcell Wallet-ի միջոցով կատարել QR վճարումներ**, ստանալ նվերներ կամ զեղչեր և **կուտակել BON-եր:**
Մշակվել և ներդրվել է նաև էլեկտրոնային կոմերցիայի համար նախատեսված վճարային լուծում **(e-commerce payments)**, որի շնորհիվ գործընկեր կազմակերպությունները կարող են հեշտությամբ ինտեգրվել համակարգին և ընդունել վճարումներ Telcell Wallet-ի օգտատերերից:

Հավելվածի գործառութային զարգացման հաջորդ քայլերն ընդգրկեցին առցանց տոմսերի ամրագրման և ձեռքբերման համակարգը՝ ինչպես Fan Zone հատվածների, այնպես էլ նստատեղերով կազմակերպվող միջոցառումների համար: Օգտատերերին հասանելի դարձավ նաև
100% by Telcell լիցքավորման սարքերի ցանցը՝ բացառիկ արտոնյալ պայմաններով: Իրականացվել են մի շարք համագործակցություններ կրթական համակարգերի հետ:

Բացի այդ, հավելվածում ներդրվել է Visa թվային քարտի CVV կոդի շուրջօրյա (24/7) հասանելիության նորարարական համակարգ, որն էապես բարձրացնում է քարտային գործարքների հարմարավետությունն ու անվտանգությունը: In-app provisioning գործառույթից բացի, ընկերությունը հաջողությամբ ինտեգրել է **Apple Wallet Extension-ի հնարավորությունը,** որի շնորհիվ Telcell Wallet-ը դասվել է այն բացառիկ հավելվածների շարքին, որոնք հնարավորություն են տալիս Visa թվային քարտն ավտոմատ կերպով ավելացնել անմիջապես Apple Wallet-ի միջավայրում՝ առանց հավելվածում լրացուցիչ գործողությունների:
Բարելավվել է նաև հաճախորդների նույնականացման ընթացակարգը, ինչը թույլ է տվել օգտատերերին ավելի պարզ և հեշտությամբ անցնել ինքնության հաստատման գործընթացը: Ինչպես նաև հավելվածում ներդրվել են մի շարք նոր ծառայություններ, որոնք օգտատերերին հնարավորություն են տալիս կատարել համալիր վճարումներ՝ օգտվելով շարունակաբար ընդլայնվող և արդիականացվող ծառայությունների ցանկից:
Ընկերությունը զգալի ներդրումներ է կատարել հավելվածի անվտանգության համակարգերի կատարելագործման ուղղությամբ՝ ապահովելով օգտատերերի տվյալների հուսալի պաշտպանություն: Մասնավորապես, ներդրվել է երկփուլ հաստատման (Two-Factor Authentication) մեխանիզմ՝ օգտատերը հավելված մուտք գործելիս հաստատում է իր ինքնությունը՝ մուտքագրելով գրանցված հեռախոսահամարին ուղարկված SMS-կոդը և գաղտնաբառը, ինչպես նաև պարտադիր տրամադրում է գրանցված էլ. հասցե՝ անվտանգության լրացուցիչ մակարդակ ապահովելու համար:
Կատարվել են մի շարք բարելավումներ նաև տրանսպորտային ուղետոմսերի գնման և ցուցադրման գործառույթներում՝ գործընթացը օգտատերերի համար դարձնելով ավելի հարմարավետ, պարզ և հասանելի:
Այսօր Telcell Wallet-ն ունի հավելվածի **ավելի քան 1,900,000 ներբեռնում:**

Նոր ապրանքներ և ծառայություններ

Ընկերությունը շարունակաբար զարգացնում է Telcell Wallet հավելվածը՝ ներդնելով նոր գործիքներ և ծառայություններ, որոնք ընդլայնում են հավելվածի հնարավորությունները:

Հիմնական շուկաները և մրցակցային դիրքը

«Թել-Սել» ԲԲԸ ծառայությունների համար շուկա է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքը: Ընկերությունը ներկայացված է իր տերմինալների ցանցով, որը տարածվում է երկրի ամբողջ բնակելի տարածքով: ՀՀ բոլոր բնակիչներին հասանելի են ինքնասպասարկման տերմինալների միջոցով վճարումների ընդունման ծառայությունը, ինչպես նաև Telcell Wallet հավելվածը: Ընկերությունը չի մատուցում ծառայություններ արտերկրում:

Ընկերության էկոհամակարգի պրոդուկտների հետ **օրական միջինում** կատարվում է **շուրջ 350,000 հպում**, ինչը վկայում է ընկերության՝ շուկայում առաջատար դիրքերից մեկը զբաղեցնելու մասին: Տերմինալների միջոցով վճարումներ ընդունելու ոլորտում Ընկերությունըառաջատար դիրք է զբաղեցնում և հմտորեն օգտագործում է տարիների ընթացքում ստեղծված իր համբավը և հավատարիմ հաճախորդների լայն բազան՝ իր դիրքը ամրապնդելու, ոլորտում զարգանալու և ընդլայնվելու նպատակով: Հավելվածով վճարումներ ընդունելու համատեքստում ընկերությունը շուկայում երկու առաջատարներից մեկն է՝ ինչպես օգտատերերի քանակով, այնպես էլ ամսական գործարքների ծավալով: Նշված ցուցանիշներով Telcell Wallet հավելվածի հիմնական մրցակիցն է Idram հավելվածը: Շուկայի մյուս մրցակիցների թվում կարելի է նշել նաև «ԻԶԻ ՓԵՅ» ՍՊԸ-ն, «ՖԱՍԹ ՇԻՖԹ» ՍՊԸ-ն, ինչպես նաև առևտրային բանկերը, որոնք առաջարկում են օնլայն վճարումների հնարավորություն իրենց հավելվածների միջոցով:

Ներկայումս **ավելի քան 2,500,000 մարդ օգտվում է Ընկերության ծառայություններից**, ինչը վկայում է Ընկերության՝ շուկայում առաջատար դիրքեր զբաղեցնելու մասին:
Ընկերության վճարահաշվարկային և այլ ծառայություններից ստացվող եկամուտների կշիռները ընդհանուր հասույթի մեջ պատմական ժամանակահատվածի համար ներկայացված են ստորև:

	2022	2023	2024
Միջնորդավճարներ՝ վճարումների ընդունման, դրամական փոխանցումների և կանխիկացման ծառայություններից	95.5%	94.1%	93.8%
Հասույթ՝ գովազդային, սպասարկման և ֆին. ներդրումներից	4.0%	5.2%	5.3%
Այլ հասույթ	0.6%	0.7%	0.9%

Վճարահաշվարկային ծառայությունների ոլորտում եկամտի հիմնական աղբյուրը հանդիսանում են վճարումները՝ վարկային կազմակերպություններին և բանկերին, բջջային օպերատորներին, կոմունալ ծառայություններ մատուցող, ինտերնետ մատակարարող, պետական և հանրային ծառայություններ մատուցող ընկերություններին, օնլայն խաղերի և առողջապահական ոլորտի կազմակերպություններին և այլոց:

Վճարահաշվարկային ծառայությունների ոլորտում Ընկերությունը հանդիսանում է շուկայի առաջատարներից: Այդ դիրքի ապահովման հիմնական բացառիկ գործոններն են՝

2017 թ. սկսած՝ Ընկերությանտարեկան զուտ եկամուտը տարեցտարի ունեցել է կայուն աճ, սակայն **2022 թվականին գրանցվել է պլանավորվածից զգալի բարձր եկամուտ:** Հիմնական պատճառներից մեկը պատերազմն էր Ռուսաստանի և Ուկրաինայի միջև:

Պատերազմի սկզբից Ռուսաստանի Դաշնությունից (ՌԴ) Հայաստանի Հանրապետություն (ՀՀ) տեղափոխվեց մեծ թվով որակավորված աշխատուժ, ինչի հետևանքով 2022-2023 թթ. ՀՀ-ում արձանագրվեց տնտեսության բարձր ակտիվություն: Բացի այդ, սկսվեցին դրամական միջոցների զգալի հոսքեր ՌԴ-ից դեպի ՀՀ: Քաղաքական վերոնշյալ հանգամանքն իր հերթին նպաստեց ՌԴ տարադրամի փոխարժեքի անկայունությանը:
Նշված գործոններն էականորեն դրական ազդեցություն ունեցան Ընկերության եկամուտների աճի վրա՝ հատկապես դրամական փոխանցումների շնորհիվ:

Օգտվելով ստեղծված հնարավորությունից և ստացած զգալի եկամուտից՝ Ընկերությունը 2023 թ. որոշեց իրականացնել էական ներդրումներ և կատարել լրացուցիչ ծախսեր Երևանի հանրային տրանսպորտի միասնական տոմսային համակարգի և **Telcell Visa թվային քարտերի նախագծերի շրջանակներում:**

Ի հավելումն, 2023 թ. կարգավորման փոփոխությունների արդյունքում խստացվեցին նույնականացման և վերահսկման մեխանիզմները, ինչը հանգեցրեց հաշիվների բացման և հավելվածում նույնականացման ծախսերի աճին:
Չնայած վերոնշյալ գործոններին՝ Ընկերության տարեկան զուտ եկամուտը շարունակում է պահպանել 2017 թվականից սկսած աճի միտումը:

Կապիտալ

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կարևոր նշանակություն ունի ոչ միայն ֆինանսական կայունության ապահովման, այլև բաժնետերերի մասնակցության իրավական հիմքերի տեսանկյունից: 2023 թ.՝ նախապատրաստվելով IPO-ի անցկացմանը, կազմակերպությունը զգալիորեն ավելացրել է իր կանոնադրական կապիտալը՝ **231 մլն դրամից այն հասցնելով 1,078 մլն դրամի, ինչը տարվա կտրվածքով համարժեք է շուրջ 367% աճի**:

Տարվա ավարտին, Բ հարթակում ցուցակման գործընթացի հաջող իրականացման արդյունքում **կապիտալն ավելացավ ևս 135 մլն դրամով կամ 12.5%-ով:**

Բացի դրանից, ներդրողների ակտիվ մասնակցության շնորհիվ ներգրավվեցին նոր ազատ դրամական միջոցներ, որոնք նաև նպաստեցին էմիսիոն եկամտի ձևավորմանը: Արդյունքում **սեփական կապիտալը աճել է 1,405 մլն դրամով:** Ներգրավված միջոցների զգալի մասը ուղղվել է տեխնոլոգիական ենթակառուցվածքների զարգացմանն ու ծառայությունների ընդլայնմանը, մասնավորապես՝ Երևանի հանրային տրանսպորտի միասնական տոմսային համակարգի նախագծի բարելավմանը, ինչն, իր հերթին, նպաստել է ավելի մեծ թվով հավատարիմ հաճախորդների ներգրավմանը:

Գրավական է նաև, որ Ընկերությունը ամբողջությամբ չի բաշխել նախորդ տարիների շահույթը՝ նոր բաժնետերերին հասանելի դարձնելով նախորդ տարիներից չբաշխված շահույթի մի մասը: Այսպիսով, **2024 թ. չբաշխված շահույթը կազմել է 2.64 մլրդ դրամ:**

Ընդհանուր սեփական կապիտալը նույնպես զգալիորեն աճել է **2024 թ.՝ հասնելով 5.3 մլրդ դրամի (44% աճ 2023 թ. համեմատ):**

Սեփական կապիտալ	2022	2023	2024	Աճ
Կապիտալ եւ պահուստներ				
Չբաշխված շահույթ	4,073,198	2,416,860	2,471,789	2%
Էմիսիոն եկամուտ	-	-	1,405,250	
Բաժնետիրական կապիտալ	231,000	1,078,000	1,212,750	13%
Պահուստային կապիտալ	46,200	161,700	188,310	16%
Չվերահսկվող բաժնեմաս	11,889	11,889	11,889	0%
Ընդամենը	**4,362,287**	**3,668,449**	**5,289,988**	**44%**



Ստորև 2024 թ. կապիտալի բաշխվածությունը ըստ սասսաբաժիսսերի



Եկամուտներ և ծախսեր

2024 թ. Ընկերությունը շարունակել է եկամուտների աճի դրական միտումը: Մասնավորապես՝

- Հիմնական գործունեությունից ստացված հասույթը ավելացել է ավելի քան **488 մլն դրամով**, կամ **5%-ով**՝ հասնելով **10,355 մլն** դրամի:
- Անուղղակի եկամուտները ցուցաբերել են զգալի աճ՝ 501 մլն դրամով կամ 46%-ով՝ կազմելով 1,586 մլն դրամ:
- Ֆինանսական ներդրումներից ստացված եկամուտը, պայմանավորված Կազմակերպության ազատ դրամական միջոցների գրագետ կառավարմամբ և նորմատիվային ցուցանիշների ապահովման նպատակային քաղաքականությամբ, աճել է 44%-ով՝ կազմելով **445 մլն դրամ**:

Եկամուտների կառուցվածքի դիվերսիֆիկացիան և տարբեր աղբյուրներից գեներացված եկամուտների համամասն աճը վկայում են Ընկերության եկամուտների կայունության և ռիսկերի նվազեցման արդյունավետ մոտեցման մասին:

Ստորև ներկայացված է 2024 թ. եկամուտների բաշխվածությունը ըստ հիմնական ուղղությունների, ինչպես նաև նախորդ տարվա հետ համեմատական վերլուծությունը:

2024 թ. ընթացքում Ընկերության եկամուտի բաշխվածությունը, հազ. դրամ

2023-24 թթ. եկամուտների ուղղությունների համեմատականը, հազ. դրամ



Հազար դրամ	2022	2023	2024	Աճ	Աճ %
Հասույթ հիմնական գործունեությունից	12,711,421	9,846,861	10,335,029	488,168	5.0%
Այլ եկամուտ	1,353,764	1,086,342	1,586,963	500,621	46.1%
Ֆին.ներդրումից եկամուտ	392,804	308,839	444,860	136,021	44.0%

2024 թ. Ընկերության համար շրջադարձային և անկյունաքարային տարի էր: Տարվա ընթացքում կենտրոնացվել են վերափոխման և խոշոր նախագծերի իրականացման գործընթացները:
Այս զարգացումները ենթադրել են նաև ծախսերի աճ, անձնակազմի ընդլայնում և նոր մասնագետների ներգրավում, ինչը ձևավորել է ամուր հիմք՝
ապագայում ավելի կայուն զարգացող Ընկերություն ունենալու համար:

Հաշվետու տարում **աշխատակիցների քանակը ավելացել է ավելի քան 14%-ով՝ հասնելով մոտ 400-ի**: Ներգրավվել են շուկայում առկա բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչի հետևանքով **աշխատավարձային ֆոնդը աճել է մոտ 24%-ով**:
Ծախսերի կառուցվածքի երկրորդ էական փոփոխությունը վերաբերում է գործակալներին վճարվող միջնորդավճարների հոդվածին. **այն աճել է 7.2%-ով՝ կազմելով 3,349 մլն դրամ՝ նախորդ տարվա 3,124 մլն դրամի դիմաց:**
Հաշվի առնելով, որ **շրջանառությունն աճել է 9.5%-ով**, տվյալ աճը վկայում է ծախսերի կառավարման և գործակալական ցանցի արդյունավետ համակազմակերպման մասին:

Այլ ծախսերի կառուցվածքում գրանցված զգալի փոփոխություններն են.

- **129.6 մլն դրամ՝** ծրագրային ապահովման բարելավման և Միասնական տոմսային համակարգի ներդրման նախագծին աջակցման նպատակով իրականացված աջակցման և սպասարկման ծախսեր,
- **51.6 մլն դրամ՝** ապահովագրական ծախսերի աճ, որը ներառում է ինչպես ֆինանսական, այնպես էլ աշխատակիցների առողջության ապահովագրությունը,
- **45.8 մլն դրամ՝** Telcell Wallet հավելվածի նոր հաճախորդների ներգրավմանն ուղղված ծախսեր, որի արդյունքում ակտիվ օգտատերերի քանակը գրեթե կրկնապատկվել է,
- **28.5 մլն դրամ՝** դրամական փոխանցումների ծախսերի աճ՝ պայմանավորված շրջանառության բարձրացմամբ:

Ստորև ներկայացված է 2024 թ. ծախսերի կառուցվածքի բաշխվածությունը ըստ հիմնական ուղղությունների, ինչպես նաև համեմատական վերլուծությունը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշների հետ:

2024 թ. ընթացքում Ընկերության ծախսերի բաշխվածությունը, հազ. դրամ



2017 թ. Ընկերությունը գրանցում է ֆինանսական կայուն աճ: 2021-2023 թթ. ընթացքում ՀՀ ֆինտեխ ընկերությունները և բանկերը զգալի եկամուտ են ունեցել միջազգային փոխանցումներից՝ հատկապես ՌԴ-ից ստացվող հոսքերի արդյունքում:

Սակայն, անգամ բացառելով վերոնշյալ արտակարգ աճը, Ընկերության հիմնական գործունեությունից ստացվող եկամուտը շարունակել է աճել:
Ստորև ներկայացված է 2017-2024 թթ. զուտ շահույթի աճի գրաֆիկական պատկերը:



Արդյունավետության հիմնական ֆինանսական ցուցանիշներ (ROA և ROE)

Կազմակերպության ֆինանսական կայունությունն ու արդյունավետությունը գնահատելու համար կարևոր են ROA (շահույթ/ակտիվներ) և ROE (շահույթ/սեփական կապիտալ) ցուցանիշները, որոնք ցույց են տալիս, թե որքան շահույթ է գեներացվում համապատասխանաբար յուրաքանչյուր միավոր ակտիվի և սեփական կապիտալի հաշվին:

- ROA ցուցանիշը 2023 և 2024 թթ. պահպանվել է հարաբերական կայունության՝ մոտ **9-10%** մակարդակում, ինչը համարվում է բարձր և կայուն արդյունք՝ համեմատած ոլորտի միջին ցուցանիշների հետ, հատկապես հաշվի առնելով Ընկերության ակտիվ շրջանառությունը և տերմինալներում ու բանկային հաշիվներում կուտակված դրամական միջոցների ծավալը:
- ROE ցուցանիշը, միևնույն ժամանակ, նվազել է մոտ 10%-ով, ինչը պայմանավորված է սեփական կապիտալի զգալի ավելացմամբ՝ ավելի քան **1.4 մլրդ** դրամի չափով էմիսիոն եկամուտի ներգրավմամբ: Արդյունքում Ընկերությունում ավելացել է նաև ազատ դրամական միջոցների պաշարը՝ շուրջ 1.5 մլրդ դրամ, ինչը ժամանակավոր ազդեցություն է թողել ROE ցուցանիշի վրա:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նմանատիպ ոլորտում գործող առաջատար կազմակերպությունների ROE-ի միջին մակարդակը տատանվում է **15-25%**, իսկ ROA-ի՝ **2-7%** տոկոսի սահմաններում:
Ընկերության արձանագրած **ROE-ի (36%) և ROA-ի (9.0%)** ցուցանիշները զգալիորեն գերազանցում են այդ միջինները՝ հաստատելով բիզնես մոդելի արդյունավետությունն ու ակտիվների նպատակային օգտագործման բարձր մակարդակը:

Ներկայացված արդյունքները ձեռք են բերվել՝ պահպանելով ֆինանսական կայունություն և աճի ներուժ՝ առանց ավելորդ ռիսկի դիմելու: Այս համադրությունը հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ շուկայի չափը, կարգավորումների դաշտը և գործառնական միջավայրը էապես տարբերվում են գլոբալ խաղացողների գործելաձևերից:

2024 թ. ROA և ROE ցուցանիշների համեմատություն միջազգային փորձի համեմատ



2023 և 2024 թթ. ROA և ROE ցուցանիշների համեմատություն

Շահութաբերության ցուցանիշներ	2023	2024
ROA (Շահույթի մասնաբաժին Ակտիվի նկատմամբ)	9.8%	9.0%
ROE (Շահույթի մասնաբաժին Կապիտալի նկատմամբ)	46%	36%

Ներքին հսկողության համակարգ

Ռիսկերի կառավարում

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը շարունակել է կիրառել ռիսկերի կառավարման համապարփակ մոտեցում՝ ուղղված կայունության, հուսալիության և նորմատիվ պահանջներին համապատասխանության պահպանմանը: Ռիսկերի կառավարումն իրականացվում է բիզնես գործընթացների ռիսկի մակարդակի և շահութաբերության համակցության հիման վրա:

Ռիսկերի հիմնական կատեգորիաները և դրանց կառավարման մեթոդները

Իրացվելիության ռիսկ. Էությունն այն է, որ Ընկերությունը որոշակի պահի դրությամբ կարող է չունենալ բավարար իրացվելի ակտիվներ իր պարտավորություններն ամբողջությամբ և ժամանակին կատարելու համար: Իրացվելիության ռիսկն առաջանում է կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ընկերությունը շարունակաբար իրականացնում է իրացվելիության ռիսկի դինամիկայի վերլուծություն և ներքին ստանդարտներից շեղումների կրիտիկական կետերի հաշվարկ: Ընկերությունն իրացվելիության կառավարման նպատակով կիրառում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության համապատասխանեցման և/կամ վերահսկվող անհամապատասխանության մեթոդները: Բացի այդ, որպես վճարահաշվարկային կազմակերպություն՝ Ընկերության համար օրենսդրությամբ սահմանված է իրացվելիության տնտեսական նորմատիվ: Այն իրենից ներկայացնում է բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցություն: Նշված սահմանային հարաբերակցության ապահովումը մշտապես գտնվում է Ընկերության ուշադրության կենտրոնում: Ռիսկի զսպման նպատակով Ընկերության ֆինանսական պարտավորությունների չկատարման ռիսկը ապահովագրված է ապահովագրական ընկերություններից: Ընկերությունը նաև ձգտում է կանխիկ դրամական միջոցների շրջանառելիության արագացման միջոցով նվազեցնել իրացվելիության ռիսկը, մասնավորապես տերմինալների ինկասացիոն ցիկլի հնարավոր կրճատման միջոցով:

Գործառնական ռիսկը վերաբերում է մարդկային սխալների, համակարգի խափանումների, ընթացակարգային խախտումների կամ արտաքին գործոնների հետևանքով առաջացած վնասների հավանականությանը: Այսպիսի իրավիճակները կարող են ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի և հեղինակության վրա:

Վճարահաշվարկային գործունեության ոլորտին հատուկ է գործառնական ռիսկի բարձր մակարդակը, որը առկա է նաև Ընկերության մոտ:

Գործառնական ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը շարունակաբար բարելավում է վերահսկիչ գործիքակազմը՝ իրականացնելով աշխատակիցների գործողությունների ամենօրյա մոնիթորինգ և միջադեպերի գրանցում, ներքին իրավական ակտերով նկարագրված գործընթացներին համապատասխանության կանոնավոր և նպատակային ստուգումներ, գործառնական ռիսկի իրադարձությունների և հաճախականության վերլուծության տվյալների բազայի ձևավորում: Աշխատակիցների պատասխանատվության շրջանակով և հասանելիություններով պայմանավորված շահերի բախման ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը փոփոխել է կազմակերպչական կառուցվածքը և ներդրել ներքին ընթացակարգեր՝ հստակ տարանջատելով աշխատակիցների իրավասությունները:

Իրավական ռիսկը կապված է օրենսդրական փոփոխությունների, օրենսդրական անհամապատասխանության, անբարենպաստ դատական վճիռների, պայմանագրային պարտավորությունների անպատշաճ կատարման հետևանքով վնասի հավանականության հետ:

Ընկերության համար ռիսկի առաջացման հիմնական պատճառ են հանդիսանում նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները, մասնավորապես ՀՀ օրենսդրական դաշտի և ՀՀ ԿԲ կանոնակարգերի փոփոխությունները, ՀՀ ԿԲ որոշումները, ինչպես նաև միջազգային օրենսդրական ոլորտային փոփոխությունները, որոնք կարող են նաև հանգեցնել գործընկերային հարաբերությունների վերանայումների: Վերոգրյալ փոփոխությունները կարող են անդրադառնալ Ընկերության բնականոն գործունեության և շուկայում տիրող իրավիճակի վրա:

Իրավական ռիսկի զսպման նպատակով Ընկերությունն իրականացնում է բոլոր հիմնական պայմանագրերի և գործարքների իրավական վերանայում, օրենսդրական փոփոխությունների և պարտադիր պահանջներին համապատասխանության մշտական մոնիթորինգ:

Կիբերանվտանգության ռիսկը ներառում է այն հնարավոր վնասները, որոնք առաջանում են չարտոնված մուտքից, տեղեկատվական համակարգերի վրա հարձակումներից, տվյալների արտահոսքից կամ ծառայության հասանելիության խափանումներից:

Տեղեկատվությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները Ընկերության գործունեության հիմքն են: Լինելով մեծածավալ անձնական տվյալների, առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության տիրապետող և մշակող՝ Ընկերությունը միջազգային լավագույն փորձն է կիրառում պաշտպանելու տեղեկատվությունը չարտոնված մուտքերից և փոփոխումից, արտահոսքից և կորստից: Տեղեկատվության գաղտնիության ապահովման համար, ըստ անհրաժեշտության, կիրառվում են ռիսկերի նվազեցման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են տվյալների ծածկագրումը, մուտքի կառավարումը, տեղեկատվության պահուստավորումը և արխիվացումը: Տեղեկատվությանը մուտք ստանալ հնարավոր է միայն սահմանված ընթացակարգ անցնելու դեպքում: Բոլոր տվյալները սահմանված պարբերականությամբ պահուստավորվում են, մուտքը տվյալին խստորեն մշտադիտարկվում է առանձնացված անձնակազմի կողմից: Ցանկացած միջադեպ հետաքննվում է՝ պատճառները բացահայտելու և դրա կրկնությունը բացառելու նպատակով:

Կիբերանվտանգության ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը կիրառում է տեղեկատվական անվտանգության բազմամակարդակ համակարգերի կիրառում (ներառյալ DLP, SIEM), ներթափանցման փորձարկումների անցկացում, աշխատակիցների վերապատրաստում:

Անընդհատության ռիսկ. սա Ընկերության կրիտիկական կարևորագույն գործընթացների խափանման, ծառայությունների մերժման կամ վճարումների կատարման դադարեցման հետևանքով վնասներ կրելու հավանականությունն է: Նշված ռիսկը կառավարելու նպատակով Ընկերությունը մանրակրկիտ մշտադիտարկում է Ընկերության գործունեության անընդհատության վրա բացասական ազդող հնարավոր գործոնները և խնդիրների առաջացման դեպքում հնարավորինս արագ ու արդյունավետ արձագանքում է դրանց՝ տալով համապատասխան լուծումներ: Ավելին, ապահովված է սարքավորումների, համակարգերի և կոմունիկացիաների կրկնօրինակումը՝ խաթարված գործընթացները հնարավորինս արագ վերականգնելու նպատակով: Մշակված են համապատասխան ներքին նորմատիվ ակտեր, ինչպիսին է գործունեության անընդհատության քաղաքականությունը:

Անհամապատասխանության (non-compliance) ռիսկ. ռիսկն առաջանում է ՀՀ օրենսդրական պահանջների, միջազգային նորմերի և ստանդարտների, Ընկերության ներքին իրավական ակտերի, պայմանագրերի, համաձայնագրերի, ինչպես նաև էթիկայի կանոնների չպահպանման հետևանքով: Ընկերության հանդեպ կարող են կիրառվել իրավական, վարչական կամ կարգապահական պատժամիջոցներ, որոնք կարող են հանգեցնել էական ֆինանսական կորուստների: Ռիսկի զսպման համար Ընկերությունը աչալրջորեն հետևում է ՀՀ օրենսդրական և ԿԲ կողմից արդեն իսկ ներդրված նորմատիվների ու սահմանված պահանջների կատարմանը, ինչպես նաև արագ և բարձր պրոֆեսիոնալիզմով է արձագանքում բոլոր փոփոխություններին:

Համբավի ռիսկ. Ընկերության վերաբերյալ որոշակի հանգամանքներում հանրության լայն շրջաններում կարող է ձևավորվել բացասական կարծիք: Դա կարող է հանգեցնել հաճախորդների թվաքանակի նվազմանը, որն էլ իր հերթին կարող է բերել կազմակերպության եկամուտների և շահույթի նվազմանը: Ընկերությունը, գիտակցելով բարի համբավի կարևորությունը, անմիջապես արձագանքում է իր համբավին սպառնացող ցանկացած հանգամանքի ի հայտ գալու պարագայում և հետևողականորեն աշխատում է հանրության հետ իր բարի համբավը պահպանելու ուղղությամբ:

Խարդախության ռիսկ. Ընկերության կամ նրա հաճախորդների հանդեպ կարող են իրականացվել խարդախություններ: Դա կարող է հանգեցնել ինչպես ֆինանսական կորուստների, այնպես էլ Ընկերության հեղինակության կորստի: Այս ռիսկը զսպելու նպատակով Ընկերությունը մշտապես իրականացնում է խարդախության հնարավոր սխեմաների բացահայտման և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակում: Բացի այդ, Ընկերությունը տարբեր միջոցներով պարբերաբար իրականացնում է տեղեկատվության տրամադրում հաճախորդներին՝ հավանական խարդախությունների և դրանցից խուսափելու հնարավորությունների մասին:

Վերոնշյալ ռիսկերը հիմնական ռիսկ ախորժակը գերազանցողներն են, բայց չեն բացառում այլ էական ռիսկերի առկայություն, թեպետ համապատասխան ստորաբաժանումը շարունակական աշխատանքներ է իրականացնում դրանք ժամանակին բացահայտելու և զսպելու մեխանիզմների բարելավման ուղղությամբ:

Ներքին վերահսկողության համակարգ

Ընկերությունը վարում է արդյունավետ ներքին հսկողության համակարգ՝ ուղղված գործառնությունների հուսալիության և թափանցիկության ապահովմանը: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է բիզնես ստորաբաժանումների աուդիտ, միջադեպերի և հայտնաբերված խախտումների ստուգումներ, հայտնաբերված ռիսկերի հիման վրա մշակվել են ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումներ:

Կազմակերպությունը նաև ամեն տարի անցնում է արտաքին աուդիտ, որն այս տարի իրականացվել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից, և հաշվի է առնում խորհրդատվությունը ներքին վերահսկողական համակարգերի բարելավման նպատակով: Բացի այդ, անց է կացվել 2025 թվականի ֆինանսական աուդիտ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ/տենդեր, որում կրկին հաղթող է ճանաչվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

Ներքին վերահսկման զարգմացման համար հաշվի են առնվում նաև ISO ստանդարտացման չափանիշները և ստուգումների ժամանակ կարևորություն ստացած ուղղությունները, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, պատվիրակվում են արտաքին անկախ փորձագետներ որոշ առանձին ուղղությունների ավելի մանրամասն ստուգումներ անցկացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում բարելավվել է նաև վերահսկողությունների մատրիցը, իսկ Կազմակերպության կառուցվածքը համապատասխանեցվել է միջազգային COSO ստանդարտներին:

Կադրային քաղաքականություն

«Թել-Սել» ԲԲԸ կադրային քաղաքականություն

Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման շրջանակում առաջնային տեղ է հատկացվում արդյունավետ կադրային քաղաքականության վարմանը: Այն ուղղված է անձնակազմի կառավարման արդյունավետ համակարգի ստեղծմանը, որն ապահովում է ընկերության ռազմավարական նպատակների իրագործումը:
Կադրային քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- Արդարություն և հավասար հնարավորություններ. աշխատակիցները պետք է ունենան հավասար իրավունքներ ու հնարավորություններ՝ անկախ սեռից, ազգությունից, կրոնից կամ այլ անհատական հատկանիշներից:
- Մասնագիտական զարգացում. ստեղծվում են պայմաններ շարունակական ուսուցման և կարիերայի առաջխաղացման համար:
- Թափանցիկություն և բաց գործընթացներ. կադրային քաղաքականությունը իրականացվում է պարզ և կանխատեսելի մեխանիզմներով:
- Մոտիվացիայի և վարձատրության արդար համակարգ. վարձատրությունը և խրախուսման մեխանիզմները համահունչ են աշխատակցի ներդրմանը և ցույց տված արդյունքներին:
- Բարենպաստ աշխատանքային միջավայր. խթանվում է թիմային աշխատանքը, վստահության և փոխադարձ հարգանքի մշակույթը:

Անձնակազմի հավաքագրում և ներգրավում

Անձնակազմի համալրման շրջանակներում լայնորեն կիրառվում են.

- մրցութային ընտրության գործընթացը,
- մասնագիտական առաջատար բուհերի հետ համագործակցությունը:

Նոր աշխատակիցների ընդունման գործընթացում ուշադրություն է դարձվում ինչպես մասնագիտական, այնպես էլ անձնային որակներին: Բոլոր ընտրված թեկնածուները նախքան աշխատանքի ընդունվելը անցնում են նախնական ստուգում (background check): Նոր աշխատակիցներին ծանոթացնում են Ընկերության կորպորատիվ մշակույթին, գործընթացներին և կանոնակարգերին

Անձնակազմի զարգացում և ուսուցում

Աշխատակիցների արդյունավետության բարձրացման նպատակով Ընկերությունը խթանում է շարունակական ուսուցումը և մասնագիտական զարգացումը: Ուսուցումն իրականացվում է՝

- ներքին և արտաքին դասընթացների միջոցով,
- սեմինարների և որակավորման բարձրացման ծրագրերի շրջանակում:

Աշխատանքի արդյունավետության գնահատում

Աշխատակիցների աշխատանքը գնահատվում է **KPI-ների և այլ օբյեկտիվ չափանիշների հիման վրա:** Գնահատման հիմնական չափորոշիչներն են՝

- Արտադրողականություն և կատարողականություն,
- Որակ և ճշգրտություն,
- Ստեղծագործականություն և նորարարություն,
- Թիմային աշխատանք և համագործակցություն,
- Պատասխանատվություն և նախաձեռնողականություն:

Վարձատրության համակարգ և մոտիվացիա

Ընկերությունում գործում է աշխատավարձի մշակված սանդղակ, որը կազմվել է աշխատաշուկայի ուսումնասիրության հիման վրա՝ ապահովելով մրցունակ և արդար վարձատրություն:

Աշխատակիցների աշխատավարձերը կարող են վերանայվել հետևյալ դեպքերում.

- **Գրեյդի փոփոխություն** (բարձրացում կամ իջեցում)՝ ազդեցության նշանակալի ավելացման/նվազման դեպքում,
- **Նույն գրեյդի շրջանակում՝** աշխատանքային պարտականությունների և ծավալի ավելացման դեպքում,
- **Տարեկան վերանայում՝** աշխատակիցների կատարողական ցուցանիշների հիման վրա կամ Ընկերությունում աշխատավարձերի ընդհանուր մակարդակի փոփոխության դեպքում:

Մոտիվացիոն համակարգը ներառում է **նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմներ:** Ընկերությունում գործում են..

- բոնուսների և պարգևավճարների համակարգ,
- հավելյալ խրախուսման ծրագրեր,
- աշխատանքի արդյունքների վրա հիմնված վարձատրության մոդել:

Կորպորատիվ մշակույթ

Ընկերությունը ձգտում է ձևավորել **համերաշխ և հարգանքի վրա հիմնված** թիմային միջավայր, որտեղ խրախուսվում են.

- բաց հաղորդակցությունը,
- թիմային աշխատանքը,
- կորպորատիվ արժեքների և առաքելության պահպանումը:

Աշխատանքային հարաբերությունների դաղարեցում

Աշխատանքային հարաբերությունները դադարեցվում են **ՀՀ աշխատանքային օրենսդրության և ներքին կանոնակարգերի համաձայն:**

Բոլոր աշխատակիցների հետ, ովքեր հեռանում են սեփական նախաձեռնությամբ, իրականացվում են Exit հարցազրույցներ՝ հեռացման պատճառների վերլուծության և կադրային քաղաքականության բարելավման նպատակով:

Գործատուի նախաձեռնությամբ ազատված աշխատակիցների համար Exit հարցազրույց չի անցկացվում: **Exit հարցազրույցների** արդյունքները համարվում են կոնֆիդենցիալ:

Կադրային քաղաքականության մշտական վերանայում

Ընկերությունը պարբերաբար վերանայում և թարմացնում է իր կադրային քաղաքականությունը՝ հաշվի առնելով.

- բիզնես ռազմավարական փոփոխությունները,
- օրենսդրական նոր պահանջները,
- կադրային կառավարման ժամանակակից միտումները:

Կադրային քաղաքականությունը ցուցանիշներով

31.12.2024 դրությամբ

Ընկերության անձնակազմի ընդհանուր

Աշխատակիցների թվաքանակ	Աշխատակիցների միջին տարիք	Միջին ստաժը ընկերությունում
397	34	3տարի 8ամիս

Աշխատակիցների գենդերային բալանսը



Աշխատակիցների բաշխում ըստ աշխատանքային ստաժի



Հավաքագրման վերաբերյալ

Աշխատանքի ընդունվածների քանակ	Աշխատանքից ազատվածների քանակ	Տարեկան հոսունություն
101	66	17,2%

Մեկ հաստիքի համալրման միջին ժամանակահատվածը՝
4-6 շաբաթ

2024թ. ուսուցման արդյունքներ

Մասնագիտական զարգացման ծրագրերին մասնակցած աշխատակիցների թիվը

Անհատական	Խմբակային
28	136

Մասնաճյուղերի ցանց

Մասնաճյուղերը ընկերության գործառնական գրասենյակներն են: Մասնաճյուղերում մատուցվում է մինչև **100 տեսակ ծառայություն**, այդ թվում՝ իրականացվում է հաճախորդների սպասարկում, հաճախորդների կարիքների բացահայտում, խաչաձև վաճառք,
Telcell Wallet հավելվածում գրանցում և նույնականացում: Մասնաճյուղերի հիմնական լսարանը ոչ թվայնացված հաճախորդներն են, իսկ հիմնական նպատակը՝ **ֆիզիկական սպասարկումը**:
Միասնական տոմսային համակարգի նախագծի շրջանակում մասնաճյուղերում իրականացվում է տրանսպորտային քարտերի տրամադրում/սպասարկում, ինչպես նաև արտոնյալ խմբերի շահառուների նույնականացում:

Մասնաճյուղերի ցանց

«Մալաթիա»

ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա Սեբաստիա 141/5 («Երևան սիթի» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-21:30

«Հրապարակ»

ք. Երևան, Կենտրոն Տիգրան Մեծի 10 («Երևան սիթի» սուպերմարկետ)

երկ - կիր

00:00-24:00

«Օհանով»

ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա Օհանով 26/9 («Երևան սիթի» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-21:30

«Րաֆֆի»

ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա Րաֆֆու 55/1 («Երևան սիթի» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-21:30

«Աբովյան»

Կոտայքի մարզ, ք. Աբովյան Հանրապետության 22/10/1 («Օրիգինալ» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-21:30

«Գյումրի»

Շիրակի մարզ, ք. Գյումրի Գորկու 56 («Կառոնա» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-21:30

Մասնաճյուղերի ցանց

«Ձեյթուն»

ք. Երևան, Քանաքեռ-Ձեյթուն
Ռուբինյանց 15/5 («Երևան սիթի» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-21:30

«Ավան»

ք. Երևան, Ավան
Հովհաննիսյան 24/7 («Երևան սիթի» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-19:00

«Բագրատունյաց»

ք. Երևան, Շենգավիթ
Բագրատունյաց 5/3
(«Երևան սիթի» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-21:30

«Մաշտոց»

ք. Երևան, Կենտրոն
Մաշտոցի 5
(«Երևան սիթի» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-21:30

«Կոմիտաս»

ք. Երևան, Արաբկիր
Կոմիտաս 60/2
(«Երևան սիթի» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-21:30

«Դավթաշեն»

ք. Երևան, Դավթաշեն
Տիգրան Պետրոսյան 25/5
(«Երևան սիթի» սուպերմարկետ)

երկ - կիր

10:00-21:30

Կառավարման մարմինների տարեկան զեկույցը

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն Ընկերության կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնագրքի պահանջների՝ Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով,
բ) Տնօրենների խորհուրդ,
գ) Խորհրդին կից աուդիտի հանձնաժողով,
ե) Վերստուգող,
դ) Գլխավոր տնօրեն:
Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը հրապարակված է Ընկերության պաշտոնական **կայքում**:

Ընկերության նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերն են.

1. «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի». տիրապետում է 17,784,240 բաժնետոմսի, ինչը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 51.33%-ը,
2. Սարգսյան Տիգրան Սուրենի. տիրապետում է 5,544,000 բաժնետոմսի, ինչը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 16.00%-ը,
3. Բաղալյան Արամայիս Ներսեսի. տիրապետում է 4,852,699 բաժնետոմսի, ինչը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 14.00%-ը:

Ընկերության խմբի կառուցվածքը

«Թել-Սել» ԲԲԸ-ն խմբի մայր կազմակերպությունն է: Խումբը բաղկացած է «Թել-Սել» ԲԲԸ-ից և դրա դուստր կազմակերպություններից, որոնցից յուրաքանչյուրում Ընկերության մասնակցությունը 100% է: Ընկերության դուստր կազմակերպություններն են՝ **«Թել-Սել Սերվիս» ՍՊԸ և «Թել-Սել Լոգիստիկս» ՍՊԸ:**
«Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը գովազդի համար տարածքի տրամադրումն է վճարային տերմինալների վրա և տերմինալների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումը:
«Թել-Սել Լոգիստիկս» ՍՊԸ-ի հիմնական գործունեության շրջանակներում առաջիկայում նախատեսվում է բեռնափոխադրման ծառայությունների մատուցում:
«Թել-Սել» ԲԲԸ-ն նաև ունի 50% մասնակցություն **«Մեգա Պանտերա» ՍՊԸ-ում**, որի գործունեությունը դադարեցվել է 2016 թ.:

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԺողովՎ)

1. Հաշվետու տարում գումարվել է տարեկան ընդհանուր ժողով և 9 արտահերթ ընդհանուր ժողով: Բոլոր ժողովները գումարվել են հետևյալ հասցեում՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 3 շ., 39 տ., բացառությամբ 23.12.2024-ին անցկացված արտահերթ տարեկան ժողովի, որն անցկացվել է ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3 հասցեում:
2. Տարեկան ընդհանուր ժողովը անցկացվել է 01.04.2024-ին, քննարկվել է օրակարգային 2 հարց:
3. Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը ժողովների մասին ծանուցվել են (առձեռն, փոստով կամ էլ. փոստով) մեկնարկից 21 օր առաջ: Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել են անձանց և հասանելի են դարձել Ընկերության գլխամասում, իսկ 23.12.2024-ի նիստի փաստաթղթերը ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց հասանելի են դարձել նաև Ընկերության ինտերնետային կայքում: Ժողովներին և դրանց օրակարգին վերաբերող տեղեկություններն ու փաստաթղթերը ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող անձանց տրամադրելու կարգը սահմանվում է Ընկերության կանոնադրությամբ և բաժնետերերի ընդհանուր ժողովի կանոնակարգով:
4. Բաժնետերերը հնարավորություն են ունեցել ժողովներին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով:

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նիստեր՝ **26**

Խորհրդի անդամների քանակը՝ **3**

Խորհրդին կից հանձնաժողով՝ **1**

Անկախ խորհրդի անդամներ՝ **⅓**

Խորհրդի նիստերին մասնակցության ցուցանիշը 2024 թվականին՝ **100%**

Խորհրդի գործառույթները

Ընկերության կանոնադրության 8.11. հոդվածը և Խորհրդի կանոնակարգը սահմանում են Խորհրդի բացառիկ ու պատվիրակված իրավասությունները, որոնք հասանելի են Ընկերության պաշտոնական կայքում:

Խորհրդի կազմը

Ընկերության Խորհուրդը բաղկացած է երեք (3) անդամից, որոնցից երեքն էլ ոչ գործադիր են և մեկը (1) անկախ է.

ԽՈՐՀՈՒՐԴ

Պաշտոնը և անունը	Գործադիր [1]	Ոչ գործադիր [2]	Անկախ	Խորհրդի անդամ է սկսած՝
Նախագահ՝ Արտաշես Ավետիսյան		✔		**12.05.2015**
Անդամ՝ Ռամի Տրեյստեր		✔		**12.05.2015**
Անդամ՝ Վաչե Գաբրիելյան		✔	✔	**11.10.2022**

1 Խորհրդի գործադիր անդամը Ընկերության ամենօրյա ղեկավարման մեջ ներգրավված անձն է:
2 Համաձայն Կանոնագրքի, Խորհրդի ոչ գործադիր անդամը այն անձն է, ով ներգրավված չէ Ընկերության կամ նրա որևէ դուստր ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ:

Նախագահ՝ Արտաշես Ավետիսյան

Աուդիտի հանձնաժողովի անդամ

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ **27.02.1962թ.**

Կրթություն

ԲՈՒՀ-ի անվանում	Սովորելու ժամանակաշրջան	Ֆակուլտետ	Մասնագիտություն
Կ. Մարքսի անվան Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ	1979-1984	Էլեկտրատեխնիկական ֆակուլտետ	Ինժեներ

Աշխատանքային փորձառությունը

Ժամանակահատված	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտ	Պաշտոն
1984-1989	Քանաքեռի ալյումինի գործարան	Արդյունաբերություն	Ինժեներ
1989-1993	«Ազնավուր» առևտրային կոոպերատիվ	Առևտրային	Վարչության նախագահի խորհրդական

Աշխատանքային փորձառությունը

Ժամանակ ահատված	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտ	Պաշտոն
1994 մարտ-հունիս	«Արդշինբանկ» ՓԲԸ	Բանկ	Վարչության նախագահի խորհրդական
1995-1998	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	Բանկ	Վարչության նախագահի տեղակալ
1998-1999	«Հայինկասացիա» ՓԲԸ	Ինկասացիա	Գործադիր տնօրեն
1999-2009	ՀՀ կենտրոնական բանկ	Ֆինանսական	• Անվտանգության վարչության պետ • Անձնակազմի կառավարման և արտաքին կապերի վարչության պետ • Տեղեկատվության և տեխնիկական միջոցների պաշտպանության վարչության պետ • Գործերի կառավարիչ • Նախագահի խորհրդական
2009-2014	Հայաստանի տրանսպորտի և կապի նախարարություն	Գործադիր մարմին	Նախագահի խորհրդական

Ընկերության խորհրդի նախագահի պաշտոնում աշխատած տարիները կազմում է շուրջ **9 տարի:** Խորհրդի նախագահը տիրապետում է Ընկերության **1000 հատ** բաժնետոմսի **(0,002%):**

Խորհրդի անկախ անդամ՝ Վաչե Գաբրիելյան

Աուդիտի հանձնաժողովի նախագահ

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ **24.11.1968թ.**

Կրթություն

ԲՈՒՀ-ի անվանումը	Սովորելու ժամանակաշրջան	Ֆակուլտետ	Մասնագիտություն	Գիտական աստիճան
ԵՊՀ	1985-1990	Էլեկտրատեխնիկական ֆակուլտետ	Ինժեներ	
ԵՊՀ	1990-1992	Տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետ	Տնտեսագետ	Ասպիրանտ
ԱՄՆ Նյու Ջերսի նահանգի Ռատգերս համալսարան	1992-1994	Հանրային կառավարման ֆակուլտետ	Հանրային կառավարում	Մագիստրոս
ԱՄՆ Նյու Ջերսի նահանգի Ռատգերս համալսարան	1994-1998	Հանրային կառավարման ֆակուլտետ	Հանրային կառավարում	Փիլիսոփայության դոկտոր (PhD)

Աշխատանքային փորձառությունը

Ժամկետ (թթ.)	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտ	Պաշտոն
1990-1992	ՀՀ Գերագույն Խորհրդ	Օրենսդիր մարմին	Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում որպես փորձագետ
1994-1998	ԱՄՆ Նյու Ջերսի նահանգի Ռատգերս համալսարան	Գիտակրթական	Հանրային կառավարման և քաղաքագիտության ֆակուլտետներում դասախոսի օգնական, նույն համալսարանի հանրային արտաղրողականության կենտրոնի փոխտնօրեն
1998-ից առ այսօր	Հայաստանի ամերիկյան համալսարան	Գիտակրթական	Քաղաքագիտության և գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետներում դասախոս
1998-ից առ այսօր	ԵՊՀ	Գիտակրթական	Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ
1998-1999	ՀՀ կենտրոնական բանկ	Ֆինանսական	Նախագահի խորհրդական
1999-2008	ՀՀ կենտրոնական բանկ	Ֆինանսական	Խորհրդի անդամ

Ժամկետ (թթ.)	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտ	Պաշտոն
2008-2010	ՀՀ կենտրոնական բանկ	Ֆինանսական	Նախագահի տեղակալ
2010-2013	ՀՀ ֆինանսների նախարարություն	Գործադիր մարմինների փոխարեն գրենք ՀՀ Կառավարություն- բոլոր տեղերում	ՀՀ ֆինանսների նախարար
2013 մայիսից հուլիս	ՀՀ Կառավարություն	ՀՀ Կառավարություն	Աշխատակազմի ղեկավար
2013-2014	ՀՀ Կառավարություն	ՀՀ Կառավարություն	Աշխատակազմի ղեկավար-նախարար
2014 ապրիլից նոյեմբեր	ՀՀ Կառավարություն	ՀՀ Կառավարություն	ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական
2014-2018	ՀՀ կառավարություն	ՀՀ կառավարություն	Փոխվարչապետ
2018	ՀՀ Կառավարություն	ՀՀ Կառավարություն	Փոխվարչապետ

Ժամկետ (թթ.)	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտ	Պաշտոն
2018 առ այսօր	«Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ	Ապահովագրական	Խորհրդի անդամ
2019 առ այսօր	Հայաստանի ամերիկյան համալսարան	Գիտակրթական	Մանուկեան Սիմոն գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան
2019 առ այսօր	«Արդշինբանկ» ՓԲԸ	Բանկ	Խորհրդի անդամ

Ընկերության Խորհրդի անդամի պաշտոնում աշխատած տարիները կազմում է շուրջ **3 տարի**: Խորհրդի նախագահը տիրապետում է Ընկերության **10000 հատ** բաժնետոմսի **(0.02%)**

Խորհրդի անդամ՝ Ռամի Տրեյստեր

Աուդիտի հանձնաժողովի անդամ

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ **07.01.1970 թ.**

Կրթություն

ԲՈՒՀ-ի անվանում	Սովորելու ժամանակաշրջան	Ֆակուլտետ	Մասնագիտություն
Մոսկվայի Պետական Լեռնային Համալսարան	1987 - 1993	Ինֆորմատիկայի ու Հաշվողական տեխնիկայի	Ինժեներ
Միջազգային Բիզնեսի Զարգացման Ակադեմիա (ՌԴ, Մոսկվա)	2004 - 2006	Executive MBA	MBA

Աշխատանքային փորձառությունը

Ժամանակահատված	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտ	Պաշտոն
2009-2015	«Դելտա Տելեքոմ» ՍՊԸ (ՌԴ, Մոսկվա)	Հեռահաղորդակցություն	Տնօրեն
1997-2009	«Գրանդ Պրիքս+» ՍՊԸ (ՌԴ, Մոսկվա)	Բարձր տեխնոլոգիաներ	Տեխնիկական Տնօրեն

Ընկերության Խորհրդի անդամի պաշտոնում աշխատած տարիները կազմում է շուրջ **9 տարի**: Խորհրդի նախագահը տիրապետում է Ընկերության **419335 հատ** բաժնետոմսի **(1.21%)**

Կորպորատիվ քարտուղար՝ Լյուդմիլա Ղազարյան

Ընկերության կորպորատիվ քարտուղարն է **Լյուդմիլա Ղազարյանը**: Ընկերության կորպորատիվ քարտուղարը նշանակվել է Խորհրդի՝ **23.08.2024** թ. որոշմամբ, իր գործառույթներն իրականացնում է համաձայն Կանոնագրքի **1.2.17-րդ կետի**, Խորհրդի կողմից հաստատված «Թել-Սել» բաց բաժնետիրական ընկերության կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագրի և Ընկերության այլ կարգերի համաձայն:

Խորհրդի գործունեությունը

2024 թվականի ընթացքում Խորհուրդը գումարել է 26 նիստ:
Խորհրդի անդամների մասնակցությունը Խորհրդի նիստերին ունի հետևյալ պատկերը.

Պաշտոն և անուն	Նիստերին մասնակցությունը անձամբ	Նիստերին մասնակցությունը հեռակա կարգով	Նիստերի քանակը, որոնց պետք է մասնակցեր
Նախագահ՝ Արտաշես Ավետիսյան	26	0	26
Անդամ՝ Ռամի Տրեյստեր	12	14	26
Անդամ՝ Վաչե Գաբրիելյան	26	0	26

Խորհրդի գործունեությունը

- Գլխավոր տնօրենը և Կորպորատիվ քարտուղարը մշտապես մասնակցում են Խորհրդի նիստերին՝ տրամադրելու համար անհրաժեշտ տեղեկատվություն և աջակցություն: Բացի այդ, Ընկերության այլ ղեկավարները ևս, ըստ անհրաժեշտության և Խորհրդի պահանջով, կարող են մասնակցել Խորհրդի նիստերին հատուկ օրակարգային հարցերի քննարկման համար: Այս բանաձևը ապահովում է, որ տարբեր հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս Խորհուրդը ստանա անհարաժեշտ խորհրդատվություն և տեղեկատվություն համապատասխան ոլորտի վերաբերյալ:
- Օրակարգի վերաբերյալ փաստաթղթերը, անհարժեշտ տեղեկատվությունը, Խորհրդի կանոնակարգին համապատասխան, Խորհուրդը ստանում է նախաօրոք՝ նվազագույնը 3 օր առաջ, որն ապահովում է, որ Խորհուրդը ստանա ժամանակին և կիրառելի տեղեկատվություն համապատասխան ձևաչափով՝ տեղեկացված որոշումների կայացումը հեշտացնելու համար: Այս գործընթացը վերահսկվում է Խորհրդի նախագահի կողմից՝ Գլխավոր տնօրենի և Կորպորատիվ քարտուղարի աջակցությամբ: Այն ապահովում է, որ համապատասխան ժամանակ հատկացվի Օրակարգային հարցերը վերլուծելու, ուսումնասիրելու և կառուցողական քննարկումները նիստի ընթացքում ապահովելու համար:
- Խորհրդի անդամներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, ինչպես նաև Խորհրդի անդամներն իրավունք ունեն Խորհրդի քննարկմանը ներկայացնել Խորհրդի որոշումների նախագծեր, որոնք ապահովում են Խորհրդի արդյունավետ և կառուցողական աշխատանքը:

ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերության կառավարման գործընթացքում կանոր դեր է զբաղեցնում խորհուրդը, որի գործունեության մեջ առանցքային դեր է խաղում ռազմավարության մշակումը՝ խթանելով հաշվետվողականությունը, հեշտացնելով տեղեկատվության հոսքերը, որոնք զուգորդվում են խորհրդի անդամների կողմից տրամադրվող անկախ մեկնաբանություններով և գլխավոր տնօրենի ու գործադիր ղեկավարության թիմի վերահսկողությամբ: 2024 թ. խորհուրդը հաստատել է Ընկերության նոր ռազմավարությունը:

Ընկերության գործադիր տնօրենի առաջարկությամբ՝ Ընկերության ռազմավարության մեջ առանձնացվել են առանցքային հետևյալ ուղղությունները.

- Նշված ժամանակահատվածի համար առանցքային նախագծերը և դրանց կարգավիճակը,
- Կազմակերպական գործողությունների ցանկը,
- Ընկերության ակնկալվող ցուցանիշները մինչև 31.12.2024 թ.:

Ընկերությունը շարունակում է կենտրոնանալ կորպորատիվ կառավարման զարգացման և ներքին հսկողությունների համակարգի բարելավման վրա.

- Խորհրդի կողմից հաստատվել է Ռիսկերի դեպարտամենտի, համապատասխանության ապահովման և ներքին դիտարկումների մարմնի գործառույթների 2024 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը: Խորհուրդը հաստատել է համապատասխանատվության ապահովման և ներքին դիտարկումների մարմնի եռամսյակային հաշվետվությունները և քննարկել դրանց առանցքային հարցերը:
- Խորհրդի կողմից հաստատվել են կորպորատիվ կառավարումը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ հետևյալ կանոնակարգերը.

  - «Թել-Սել» ԲԲԸ-ի կորպորատիվ կառավարման կանոնագիրքը:
  - «Թել-Սել» ԲԲԸ-ի շահութաբաժնային քաղաքականությունը:
  - «Թել-Սել» ԲԲԸ-ի շահակիցների հետ հարաբերությունների քաղաքակա նությունը:
  - «Թել-Սել» ԲԲԸ-ի ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման և դրանց բացահայտման կարգը:
  - «Թել-Սել» ԲԲԸ-ի ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալի մասնակիցների՝ իրենց արժեթղթերով գործարքներ կնքելու կարգը:
  - «Թել-Սել» ԲԲԸ-ի կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը:
  - «Թել-Սել» ԲԲԸ-ի խորհրդի անդամների վարքագծի կանոնները:
  - «Թել-Սել» ԲԲԸ-ի խորհրդի անդամների գնահատման քաղաքականությունը:
  - «Թել-Սել» ԲԲԸ-ի էթիկայի և վարքագծի կանոնագիրքը:
  - «Թել-Սել» ԲԲԸ-ի աուդիտի հանձնաժողովի կանոնակարգը:
  - «Թել-Սել» ԲԲԸ-ի անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը:

2024 թ. նկատվել է խորհրդի գործունեության և որակի զգալի աճ: Տարվա ընթացքում գումարվել է խորհրդի 26 նիստ, որոնցում քննարկվել է օրակարգային շուրջ 39 հարցեր: Հարկ է նշել, որ խորհրդի նիստերը տեղի են ունեցել կառուցողական միջավայրում: Խորհուրդը շարունակել է հսկողության ներքո պահել Ընկերության կառավարումը, գործունեության անխափանությունը և վերահսկողությունը: Խորհուրդը և գործադիր մարմինը աջակցել են կառավարման բարելավմանը, որոնք կոչված են խթանելու պարզությունը և արդյունավետ որոշումների կայացումը վճարահաշվարկային ծառայությունների մատուցման ոլորտում: Նման բարելավումները ներառում էին նաև խորհրդի անդամների կողմից գործադիր մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի նախագծերում ճշգրտումներ կատարելը:

Խորհրդի աշխատանքի գնահատումը

Հարցի բովանդակություն	Գնահատում
Ընկերության ռազմավարության ձևավորման և իրականացման արդյունավետությունը (ռազմավարության հիմքում դրված նպատակների հիմնավորվածություն, հիմնական ռիսկեր և հնարավորություններ, Ընկերության մրցակցային առավելություններ, չափելի ցուցանիշների առկայություն, ինչը հնարավորություն է տալիս դատել ռազմավարության արդյունավետության/անարդյունավետության վերաբերյալ)	ՀԱՋՈՂՎԱԾ
Ներքին վերահսկման և ռիսկերի կառավարման համակարգի ստեղծում և աշխատանքի արդյունավետություն	ԲԱՎԱՐԱՐ
Խորհրդի կողմից ներքին վերահսկողության արդյունավետության դիտարկում և գործադիր մարմնի հետ ներքին վերահսկողության իրականացման հարցերի քննարկում	ՀԱՋՈՂՎԱԾ
Խորհրդի նիստերի անցկացման գործող ընթացակարգերի արդյունավետություն	ՀԱՋՈՂՎԱԾ
Ներքին վերահսկողության և ռիսկերի կառավարման կարգերի հաստատում, դրանց վերլուծություն և կատարելագործում	ԲԱՎԱՐԱՐ
Ներքին իրավական ակտերով ընդունված շահերի բախմանը վերաբերող պահանջների իրականացում	ՀԱՋՈՂՎԱԾ
Ֆինանսատնտեսական գործունեության վերահսկում	ՀԱՋՈՂՎԱԾ
Գործադիր մարմնի աշխատանքի արդյունավետություն, այդ թվում աշխատանքի վերահսկման միջոցով	ՀԱՋՈՂՎԱԾ
Ընկերության զարգացման առաջնային ուղղությունների որոշում	ՀԱՋՈՂՎԱԾ
Բաժնետերերի հետ հարաբերությունների զարգացում	ՀԱՋՈՂՎԱԾ
Բաժնետերերի ամբողջական և ճշգրիտ տեղեկացում Ընկերության ընթացիկ վիճակի վերաբերյալ	ՀԱՋՈՂՎԱԾ

Խորհրդի աշխատանքի գնահատումն իրականացվել է Խորհրդի կողմից «Թել-Սել» բաց բաժնետիրական ընկերության Խորհրդի անդամների գնահատման քաղաքականության հիման վրա:

5. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Խորհուրդը ստեղծել է հետևյալ հանձնաժողովները.
ա) Աուդիտի հանձնաժողով

Աուդիտի հանձնաժողովը բաղկացած է 3 անդամից, որոնք բոլորն էլ Խորհրդի անդամներ են.

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ			
Պաշտոն և անուն	**Ոչ գործադիր**	**Անկախ**	**Աուդիտի հանձնաժողովի անդամ է՝ սկսած**
Նախագահ՝ Վաչե Գաբրիելյան	✔	✔	16.09.2024
Անդամ՝ Ռամի Տրեյստեր	✔		16.09.2024
Անդամ՝ Արտաշես Ավետիսյան	✔		16.09.2024

Աուդիտի հանձնաժողովի գործառույթները և պարտականությունները սահմանված են Աուդիտի հանձնաժողովի կանոնակարգով, որը հաստատվել է Խորհրդի կողմից 29.07.2024-ին:
Աուդիտի հանձնաժողովի կանոնակարգը հասանելի է Ընկերության ինտերնետային կայքում՝ **հղում:**
Համաձայն Աուդիտի հանձնաժողովի կանոնակարգի 2-րդ բաժնի՝ Աուդիտի հանձնաժողովը հաշվետու է Խորհրդին, սահմանում է բարելավում պահանջող հիմնահարցերի շրջանակը, առաջարկություններ է ներկայացնում Խորհրդին ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ: Աուդիտի հանձնաժողովը իր կարևոր դերակատարությունն է ունեցել 2025 թ. ֆինանսական աուդիտն իրականացնող անձի ընտրության հարցում, ինչպես նաև 2024 թ. ֆինանսական հաշվետվության հաստատման գործընթացում:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ

Ընկերության վերստուգողն է Արմեն Դավթյանը:
Նշանակվել է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:
Վերստուգողը իր գործառույթներն իրականացնում է համաձայն կանոնադրության 9-րդ բաժնի:

7. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ընկերության վերստուգող՝ Արմեն Դավթյան: Նշանակվել է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Վերստուգողը իր գործառույթներն իրականացնում է համաձայն կանոնադրության 9-րդ բաժնի:

Գլխավոր տնօրեն՝ անուն, ազգանուն Արտյոմ Ղազարյան

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ 26.09.1979 թ.

ԲՈՒՀ	Գտնվելու վայրը	Ուսման ժամանակաշրջան	Ֆակուլտետ	Մասնագիտություն	Գիտական աստիճան
ԵՊՀ	ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	1997-200 3թթ.	Կենսաֆիզիկա	Կենսաֆիզիկա	Մագիստրոս
ՀՀ ԳԱԱ	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 24	2003-2006 թթ.	Մոլեկուլային կենսաբանություն	Կենսաբժշկություն	Գիտությունների թեկնածու

Աշխատանքային փորձառությունը վերջին 10 տարում

Ժամանակահատված	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտ	Գտնվելու վայրը	Պաշտոն
2012-2022թթ.	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	Բանկ	ՀՀ, ք. Երևան, Արամի 82-84	Մարքեթինգի վարչության ղեկավար
2022-2023թթ.	«Թել-Սել» ՓԲԸ	Վճարահաշվարկային	ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3	Կոմերցիոն տնօրեն
2023թ. - առ այսօր	«Թել-Սել» ԲԲԸ	Վճարահաշվարկային	ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3	Գլխավոր տնօրեն

Արտյոմ Ղազարյանին Ընկերության գլխավոր տնօրեն է նշանակել բաժնետերերի ընդհանուր ժողովը: Պաշտոնավարում է 27.10.2023-ից:
Ընկերությունում աշխատած ժամանակահատվածը կազմում է շուրջ 3 տարի:
Գլխավոր տնօրենը տիրապետում է Ընկերության **3000 բաժնետոմսի** (0,008%):

8. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերության՝ 2024 թ. արտաքին ֆինանսական աուդիտն իրականացնող անձ է նշանակվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, որը արտաքին աուդիտն իրականացնող անձի պարտականությունները կատարում է 16.09.2024-ից՝ մեկ տարի ժամկետով:

2024 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ. «Հետևիր կամ բացատրիր»

Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/ Ոչ	Մեկնաբանություններ/ Բացատրություն
Բաժնետերերի ընդհանուր ժողովի (ԲԸԺ) իրավասությունները և բաժնետերերի իրավունքները		
Ընկերության կանոնադրությունը և համապատասխան կարգերը նախատեսում են հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը:	Այո	Կարգավորվում է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի 2.1.11, 2.1.13 կետերով և Բաժնետերերի ընդհանուր ժողովի կարգի 27-րդ կետով և 5-րդ բաժնի դրույթներով:
ԲԸԺ-ի օրակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը բաժնետերերը ստացել են ԲԸԺ-ից առնվազն 21 օր առաջ:	Այո	Տարեկան ընդհանուր ժողովն անցկացվել է 01.04.2024 թ.: ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը, համաձայն Ընկերության կանոնադրության, ԲԸԺ-ի մասին ծանուցվել են ԲԸԺ-ից առնվազն 21 օր առաջ: Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել են ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց, հասանելի են եղել նաև Գլխավոր գրասենյակում:
ԲԸԺ-ի օրակարգը ներառում է քվեարկության ղրվելիք հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը, ինչպես նաև Խորհրդի կողմից ԲԸԺ-ի հաստատմանը ներկայացված աուդիտն իրականացնող անձի անունը:	Այո	Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել են ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց, ինչպես նաև հասանելի են դարձել Ընկերության ինտերնետային կայքում և Գլխավոր գրասենյակում:

Գործող կարգերը, որոնց վերաբերյալ հողում է կատարվել կանոնադրությունում, սահմանում են հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում քվեարկել հեռակա կարգով՝ քվեաթերթիկների միջոցով:	Այո	Կարգավորվում է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի 2.1.11 և 2.1.13 կետերով, ինչպես նաև Բաժնետերերի ընդհանուր ժողովի կարգի 2-րդ և 6-րդ բաժինների դրույթներով:
Կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում նշանակել ներկայացուցիչ՝ համաձայն գործող օրենսդրության պահանջների:	Այո	Կարգավորվում է Կորպորատիվ կառավարման կանոնագրքով և Բաժնետերերի ընդհանուր ժողովի կարգի 7-րդ բաժնով:
Արդյոք բաժնետերերը ԲԸԺ-ում քվեարկում են քվեաթերթիկների միջոցով:	Այո	
Արդյոք բաժնետերերն իրավունք ունեն հարցեր տալու ժողովի գումարումից մինչև 10 օր առաջ:	Այո	Կարգավորվում է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի 2.1.11 և 2.1.13 կետերով և Բաժնետերերի ընդհանուր ժողովի կարգի 4-րդ բաժնի դրույթներով:
Արդյոք Խորհուրդը Ժողովի ժամանակ պատասխանել է բաժնետերերի հարցերին:	Ոչ	Հարցեր չեն եղել խորհրդին:
Արդյոք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալու Ժողովի ժամանակ:	Այո	
Արդյոք Խորհուրդը պատասխանել է առաջադրված բոլոր հարցերին:	Ոչ	Հարցեր չեն եղել խորհրդին:
Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը		
Ընկերությունն ունի շահութաբաժինների վճարման կարգ, որը մշակվել և հաստատվել է Խորհրդի կողմից և հրապարակվել է Ընկերության ինտերնետային կայքում:	Այո	Շահութաբաժնային քաղաքականություն՝ **հղում**
Շահութաբաժինների վճարման կարգը ներառում է վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը (payout ratio):	Այո	Ընկերության շահութաբաժնային քաղաքականությամբ վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը կազմում է 50%:

Խորհուրդը		
Ընկերությունը հիմնադրել է հստակ պարտականություններով և գործառույթներով օժտված Խորհուրդ, որի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակված է Ընկերության ինտերնետային կայքում:	Այո	Խորհրդի կանոնակարգ՝ **հղում**
Արդյոք Խորհուրդը կազմում է հաշվետվություն Կանոնագրքի դրույթներին հետևելու վերաբերյալ:	Այո	
Արդյոք Խորհուրդը նշանակում և ազատում է գործադիր մարմնի ղեկավարին, ինչպես նաև ձևավորում է կոլեգիալ գործադիր մարմին (եթե այդպիսին նախատեսված է), նշանակում և ազատում դրա անդամներին:	Ոչ	Ընկերության կանոնադրության համաձայն՝ Գործադիր տնօրենի նշանակումը և լիազորությունների դադարեցումը ԲԸԺ-ի իրավասությունն են:
Արդյոք Խորհրդում ոչ գործադիր անդամները կազմում են մեծամասնություն, և արդյոք նրանցից առնվազն մեկ երրորդը անկախ են:	Այո	Խորհրդում գործադիր անդամներ չկան, այն կազմված է 3 անդամից, որոնցից մեկը անկախ անդամ է:
Խորհրդի հանձնաժողովները տարեկան մեկ անգամ անցկացնում են ներքին կորպորատիվ փաստաթղթերի (կանոնադրություն, կանոնակարգեր և այլ) ՝ իրենց իրավասության ոլորտին վերաբերող դրույթների փորձաքննություն և համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում Խորհրդին:	Այո	Աուդիտի հանձնաժողով:
Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար հաշվետվություն են ներկայացնում Խորհրդին:	Այո	Համաձայն Աուդիտի հանձնաժողովի կանոնակարգի:
Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Այո	

Խորհրդի անդամների նշանակումը		
Խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը ԲԸԺ-ին զուգակցվում է առաջադրված թեկնածուի պաշտոնի նկարագրով և համառոտ կենսագրականով, որտեղ շարադրված են ստանձնելիք պարտականությունները, գործառույթները և կենսագրական տվյալները:	Ոչ	Ընկերությունը 2024 թ. խորհրդի նոր անդամ չի ընտրել:
Խորհրդի անդամների առաջադրված թեկնածուների պաշտոնի նկարագրերը և համառոտ կենսագրականները հրապարակվել են Ընկերության ինտերնետային կայքում՝ ԲԸԺ-ից առնվազն 30 օր առաջ:	Ոչ	Ընկերությունը 2024 թ. խորհրդի նոր անդամ չի ընտրել:
Խորհուրդ. Գործունեության մոնիթորինգ		
Խորհուրդը, համաձայն գնահատման քաղաքականության, գնահատում է խորհրդի յուրաքանչյուր անդամի աշխատանքը:	Այո	Համաձայն Խորհրդի անդամների գնահատման քաղաքականության:
Խորհուրդը իրականացնում է իր գործունեության արդյունավետության տարեկան գնահատում՝ համաձայն հաստատված գնահատման քաղաքականության:	Այո	
Խորհրդի նիստերի հաճախելիությունը		
Խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության մասին տվյալները ներառված են տարեկան հաշվետվությունում:	Այո	
Խորհրդի անդամների վերաբերյալ տվյալները		
Ընկերության տարեկան հաշվետվությունը և/կամ Կորպորատիվ կառավարման տարեկան զեկույցը պարունակում է մանրամասն տեղեկություններ խորհրդի անդամների մասին:	Այո	

Խորհրդի նիստերի տարեկան պլանը		
Նիստերը պետք է հրավիրվեն եռամսյակում նվազագույնը մեկ անգամ:	Այո	Խորհրդի կանոնակարգ:
Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին ուղարկվում են նիստի օրվանից առնվազն 3 օր առաջ:	Այո	Խորհրդի կանոնակարգ:
Խորհրդի նախագահը		
Խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի պաշտոնները չեն կարող համատեղվել:	Այո	
Կանոնադրությամբ հստակ տարանջատված են Խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի իրավասությունները:	Այո	Կետեր՝ 8.13 և 8.15:
Խորհրդի նախագահը պատասխանատու է այն բանի համար, որ Խորհրդի նորընտիր անդամները իրենց պաշտոնավարման սկզբում պատշաճ ծանուցվեն Ընկերության և իրենց պարտականությունների մասին:	Այո	Խորհրդի կանոնակարգ:
Խորհրդի անդամների գործունեության վնասների ապահովագրումը և նրանց ազատումը պատասխանատվությունից		
Կանոնադրությունը պարունակում է դրույթներ Խորհրդի անդամներին այն վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ, որոնք առաջացել են նրանց պաշտոնական պարտականությունների իրականացման հետևանքով: Ընկերությունը ապահովագրված է Խորհրդի անդամների գործունեության հետ կապված վնասների ռիսկից:	Այո	Կարգավորվում է գործող կարգերով և կանոնակարգերով (այդ թվում՝ Խորհրդի կանոնակարգի 61-րդ կետով), համաձայն օրենսդրության պահանջների:

Աուդիտի հանձնաժողով		
Ընկերությունը ստեղծել է խորհրդի ոչ գործադիր անդամներից բաղկացած աուդիտի հանձնաժողով, որտեղ մեծամասնությունը, ինչպես նաև նախագահը, պետք է լինեն անկախ:	Այո	Աուդիտի հանձնաժողովը ստեղծվել է 23.08.2024 թ. Խորհրդի որոշմամբ, որի նախագահը Խորհրդի անկախ անդամ Վաչե Գաբրիելյանն է:
Աուդիտի հանձնաժողովի բոլոր անդամները ունեն համապատասխան որակավորում ֆինանսների, հաշվապահության, աուդիտի և ներքին հսկողության հարցերում:	Այո	Խորհրդի անդամների աշխատանքային փորձը վկայում է ֆինանսական և ներքին հսկողության ոլորտներում իրենց ձեռնահասության մասին:
Աուդիտի հանձնաժողովը հետևում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանը և ֆինանսական գործունեությանը վերաբերվող հայտարարություններին՝ դիտարկելով դրանցում տեղ գտած կարևոր պնդումները ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ, վերանայում եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և Խորհրդին ու ԲԸԺ-ին ներկայացնում դրանց հաստատման վերաբերյալ առաջարկություններ:	Այո	
Աուդիտի հանձնաժողովը տարվա ընթացքում նվազագույնը մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ քննարկելու աուդիտի հետ կապված հարցերը:	Այո	
Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է ներքին վերահսկողության, ներքին աուդիտի և ռիսկերի կառավարման համակարգերի վերանայման համար:	Այո	

Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության և նրա աշխատանքի պայմանների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու, ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը ներկայացնելու համար:	Այո	
Աուդիտի հանձնաժողովը մշակել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախության չափորոշիչները:	Ոչ	Չափորոշիչները Խորհրդի կողմից հաստատվել են մինչ Աուդիտի հանձնաժողովի ստեղծումը:
Աուդիտի հանձնաժողովը դիտարկել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը՝ համաձայն հաստատված չափորոշիչների, և արդյունքները ներառվել են տարեկան հաշվետվությունում:	Այո	
Աուդիտի հանձնաժողովը պահում է իր նիստերի արձանագրությունները:	Այո	
Ներքին աուդիտ		
Ներքին աուդիտը նշանակվում և ազատվում է Աուդիտի հանձնաժողովի համաձայնությամբ:	Ոչ	Ներքին աուդիտի պարտականությունները իրականացնում է Վերստուգողը, որին ընտրում է ԲԸԺ-ն՝ Խորհրդի առաջարկությամբ:
Ներքին աուդիտն իրականացնող անձը անմիջականորեն հաշվետու է Աուդիտի հանձնաժողովին:	Ոչ	Վերստուգող հանձնաժողովի անդամները (Վերստուգողը) հաշվետու են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին:
Ներքին աուդիտն իրականացնող անձը իր գործունեությունն իրականացնում է համաձայն Աուդիտի հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան պլանի և այդ մասին պարբերաբար զեկուցում է Աուդիտի հանձնաժողովին:	Ոչ	Վերստուգողն իր գործունեությունը իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով՝ համագործակցելով Աուդիտի հանձնաժողովի հետ:
Ներքին աուդիտն իրականացնող անձը պատասխանատու է ներքին հսկողության լիարժեքության դիտարկման և ներքին հսկողության ընթացակարգերի իրականացման համար:	Այո	

Արտաքին աուդիտ		
Արտաքին աուդիտն իրականացնող անձը չպետք է մատուցի ոչ աուդիտորական ծառայություններ:	Այո	
Արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը հաստատել է ԲԸԺ-ն:	Ոչ	Արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը հաստատվել է Խորհրդի կողմից՝ համաձայն գործող օրենսդրության պահանջների:
Ընկերությունն ունի արտաքին աուդիտն իրականացնող անձի ռոտացիայի քաղաքականություն:	Այո	Ընկերությունն ունի անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգ:
Խորհրդի այլ հանձնաժողովները		
Ընկերությունը ստեղծել է Խորհրդի անդամներից կազմված այլ հանձնաժողովներ:	Ոչ	Ընկերությունը կորպորատիվ կառավարման կանոնագրքին միացել է 2024 թվականի երկրորդ կիսամյակին և նախատեսում է հետագայում ստեղծել այլ հանձնաժողովներ:
Խորհրդի բոլոր հանձնաժողովները գործում են համաձայն իրենց կանոնակարգերի, որտեղ սահմանված են դրանց գործառույթները, դերն ու պարտականությունները:	Այո	Աուդիտի հանձնաժողովի կանոնակարգ:
Խորհուրդը ստեղծել է ռիսկերի կառավարման, ռազմավարական պլանավորման և ներդրումային հանձնաժողովներ՝ օժտված համապատասխան իրավասություններով:	Ոչ	
Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, հաշվետվություն են ներկայացնում Խորհրդին: Հանձնաժողովները նման հաշվետվություն ներկայացնում են յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	Ոչ	Աուդիտի հանձնաժողովի կանոնակարգով սահմանված կարգով:
Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է ակտիվորեն մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին, ինչպես նաև ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Այո	

Կորպորատիվ քարտուղար

Խորհուրդը նշանակել է կորպորատիվ քարտուղար, որը հաշվետու է Խորհրդին: Կորպորատիվ քարտուղարը աջակցում է Խորհրդի նիստերի կազմակերպմանը, հատկապես նիստերի պլանավորմանը, հրավիրմանը, անցկացմանը և արձանագրության վարմանը՝ համաձայն օրենքների և Ընկերության ընթացակարգերի: Խորհուրդը սահմանում է կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը:	Այո	Խորհուրդը 29.07.2024 թ. որոշմամբ սահմանել է կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը: Խորհուրդը 23.08.2024 թ. որոշմամբ նշանակել է Խորհրդի քարտուղար:
Կորպորատիվ քարտուղարը աջակցում է Խորհրդի նախագահին՝ դիտարկելու, թե ինչպես է Ընկերությունը կատարում ՀՀ օրենսդրության, Կանոնագրքի, Կանոնադրության և կանոնակարգերի պահանջները կորպորատիվ կառավարման ոլորտում:	Այո	

Տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը

Տարեկան հաշվետվություն

Ընկերությունը կազմել է 2024 թ. տարեկան հաշվետվությունը, որը ներկայացվել է բաժնետերերի հաստատմանը և հրապարակվել է Ընկերության ինտերնետային կայքում:	Այո	
Տարեկան հաշվետվությունը պարունակում է ֆինանսական հաշվետվություն, որը կազմվել է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:	Այո	

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության շահառուներին հասցեագրված տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս գնահատել Ընկերության ներդրումը տնտեսական կայունության, սոցիալական բարեկեցության և բնապահպանական անվտանգության ապահովման գործում:	Այո	
Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություն Ընկերության վարքագծի կանոնների վերաբերյալ և հղում Ընկերության ինտերնետային կայքին, որտեղ այն տեղադրված է:	Այո	
Տարեկան հաշվետվությունը պարունակում է Կորպորատիվ կառավարման հայտարարագիրը՝ Կանոնագրքին հետևելու վերաբերյալ, և/կամ մանրամասն բացատրություն՝ չհետևելու և դրա պատճառների վերաբերյալ:	Այո	
Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ շահագրգռվածության առկայությամբ (փոխկապակցված) գործարքների մասին՝ մանրամասն ներկայացնելով այդպիսի գործարքների հաստատման կամ վավերացման նպատակով Ընկերության կողմից կիրառվող քաղաքականությունն ու ընթացակարգերը:	Ոչ	Նման գործարքներ 2024 թ. ընթացքում տեղի չեն ունեցել:

Տարեկան հաշվետվությունը պարունակում է արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:	Այո	
Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության նշանակալից (10%-ից ավելի) բաժնետոմսերին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը:	Այո	
Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության փոխկապակցված անձանց ցուցակը և փոխկապակցված անձանց հետ կնքված գործարքների ցանկը:	Ոչ	
Տարեկան հաշվետվությունը պարունակում է խորհրդի անդամների, այդ թվում՝ անկախ անդամների անունները և հակիրճ կենսագրությունները, նաև տարվա ընթացքում հրաժարական տված և պաշտոնից հեռացված անդամների անունները, տարվա ընթացքում խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած բոլոր անձանց վարձատրության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև խորհրդի նիստերին նրանց մասնակցության մասին տեղեկություններ:	Այո	
Տարեկան հաշվետվությունը պարունակում է արտաքին աուդիտն իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները:	Ոչ	Տարեկան հաշվետվությունը պարունակում է արտաքին աուդիտն իրականացնող անձի անունը և աուդիտորական հաշվետվությունը

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի նկարագրությունը, այդ թվում՝ դուստր ընկերությունների, մասնաճյուղերի, ինչպես նաև փոխկապակցված այլ ընկերությունների հետ քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը	Ոչ	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության մասնաճյուղերի ցանկը և Ընկերության խմբի կառուցվածքը: Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը հասանելի է ինտերնետային կայքում՝ **հղում**
Տարեկան հաշվետվությունը պարունակում է Գլխավոր տնօրենի ամփոփիչ հաշվետվությունը նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, ռիսկային գործոնները, գալիք տարվա հեռանկարները, Ընկերության ռազմավարությունը, տարվա ընթացքում կնքված խոշոր գործարքները, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր փոփոխությունները, բացատրություն նախորդ տարվա ցուցանիշների հետ համեմատած ֆինանսական արդյունքների կարևոր փոփոխությունների վերաբերյալ, շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում՝ շահութաբաժինների վճարման առաջարկությունները:	Այո	Շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում՝ շահութաբաժինների վճարման առաջարկությունները, հրապարակված են Ընկերության պաշտոնական կայքում՝ Բաժնետերերի տարեկան ժողովի հրավիրման ծանուցագրի հետ միասին:
Տարեկան հաշվետվությունը պարունակում է խորհրդի անդամների, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի վարձատրությունը:	Ոչ	
Տարեկան հաշվետվությունը պարունակում է թողարկված բաժնետոմսերի քանակը և դասը կամ դասերը, ինչպես նաև արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքների ամփոփումը	Այո	Ընկերությունը թողարկել է սովորական և արտոնյալ բաժնետոմսեր: Արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքները սահմանված են կանոնադրությամբ:

Ընկերության ինտերնետային կայքը		
Ընկերությունն ունի ինտերնետային կայք, որտեղ առանձին բաժին նվիրված է կորպորատիվ կառավարմանը:	Այո	հղում
Ընկերության ինտերնետային կայքը պետք է պարունակի վերջին 3 տարիների ԿԿ հայտարարագրերը:	Ոչ	Ընկերությունը Կորպորատիվ կառավարման կանոնագրքին միացել է 2024 թ. երկրորդ կիսամյակից:
Ինտերնետային կայքը, կորպորատիվ կառավարման բաժինը և այնտեղ տեղադրված փաստաթղթերը հասանելի են նաև օտար լեզվով:	Ոչ	Օտար լեզվով հասանելի է միայն կայքը:
Կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են Ընկերության պետական գրանցման վկայականը և կանոնադրությունը՝ բոլոր գործող փոփոխություններով և լրացումներով:	Ոչ	Կանոնադրությունն իր բոլոր փոփոխություններով տեղադրված է Կայքի Իրավական ակտեր բաժնում՝ հղում
Կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են խորհրդի անդամների և գործադիր մարմնի անդամների վերաբերյալ տեղեկություններ, որոնք ներառում են նրանց համառոտ կենսագրությունները և պաշտոնների նկարագրությունները:	Ոչ	Կայքը պարունակում է տեղեկատվություն միայն գործադիր մարմնի և ղեկավար անձանց վերաբերյալ՝ հղում
Կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են խորհրդի և խորհրդի հանձնաժողովների կանոնակարգերը, ինչպես նաև կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը:	Այո	հղում

Կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է խորհրդի տարեկան գնահատման քաղաքականությունը:	Այո	**հղում**
Կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են նախորդ 5 տարիների ԲԸԺ-երի նիստերի արձանագրությունները:	Ոչ	Ընկերությունը միացել է Կորպորատիվ կառավարման կանոնագրքին 2024 թ. երկրորդ կիսամյակից:
Կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է հաստատված շահութաբաժինների վճարման քաղաքականությունը:	Այո	**հղում**
Կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է կառուցվածքի և բաժնետոմսերի խաչաձև տնօրինման մասին տեղեկատվություն:	Այո	Վարչակազմակերպական կառուցվածքը տեղակայված է ինտերնետային կայքում՝ **հղում**
Կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են Ընկերության նախորդ 3 տարիների տարեկան հաշվետվությունները:	Ոչ	Ընկերությունը Կորպորատիվ կառավարման կանոնագրքին միացել 2024 թվական երկորդ կիսամյակից

Վարքագծի կանոններ		
Ընկերությունն ընդունել է վարքագծի կանոնները:	Այո	Ընկերության Էթիկայի և վարքագծի կանոնագիրքը հաստատվել է 29.07.2024 թ. Խորհրդի որոշմամբ՝ **հղում**
Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում կորպորատիվ արժեքների, գործարար վարքագծի, պետության և պաշտոնատար անձանց, ինչպես նաև մրցակիցների հետ հարաբերությունների մասին:	Այո	Ընկերության Էթիկայի և վարքագծի կանոնագրքի 3-րդ և 4-րդ բաժինները:
Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում «ահազանգումների», վարքագծի կանոնների խախտման, ինչպես նաև այդ խախտումների մասին հաղորդելիս գաղտնիության պահպանման մասին:	Այո	Ընկերության Էթիկայի և վարքագծի կանոնագրքի 8-րդ բաժին:
Ընկերությունը նշանակել է պաշտոնյա, ով պատասխանատու է վարքագծի կանոններին հետևելու մոնիթորինգի համար:	Այո	Ընկերության Էթիկայի և վարքագծի կանոնագրքի 51-րդ կետ:
Կանոնադրական կապիտալի ավելացումը		
Կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումների մասին Խորհուրդը անհապաղ տեղեկացրել է բոլոր բաժնետերերին:	Այո	

Շահակիցներ		
Խորհուրդը սահմանել է այն շահակիցների շրջանակը, որոնք համապատասխանում են Ընկերության գործունեությանը, օրինական շահեր և սպասելիքներ ունեն Ընկերությունից:	Այո	Ընկերության Շահակիցների հետ հարաբերությունների քաղաքականություն՝ **հղում**
Ընդունել քաղաքականություն՝ միտված Շահակիցների շահերը և սպասելիքները հաշվի առնելուն:	Այո	Հաճախորդների դիմում-բողոքների ներկայացման և քննության կանոնակարգ՝ **հղում**
Խորհուրդը մշակել և հրապարակել է Շահակիցների հետ հարաբերությունների հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը և տարեկան հաշվետվության մեջ ներկայացնում է դրանց իրականացումը:	Այո	
Շահակիցների համար հասանելի են Ընկերության ինտերնետային կայքում տեղադրված տարեկան հաշվետվություններին և կորպորատիվ կառավարմանը վերաբերող բաժինները:	Այո	

TELCELL

Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
info@telcell.am +374 60 272 222 +374 60 272 223

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ գործունեությունը վերահսկում է ՀՀ ԿԲ-ն: